[83] Again, the word used here is taken from the description of the prodigal son; cf. Luke 15:13.

93 *Զգութ սիրոյ քո Տէր՝ միաւորեա՛ յիս,*
եւ զարգելեալս ի բանտի կապանաց՝ արձակեա՛
եւ խզեա՛ զկապանս մեղաց իմոց.
առաջնորդեա՛ ինձ ի ճանապարհ արդարութեան,
եւ տեղի յարկից պատրաստեա՛, եւ պսակեա՛ ընդ սուրբս քո:

94 *Հաղորդս արա՛ զիս Տէր՝ աստուածային սիրոյ քոյ,*
սիրել զպատուիրանս քո
եւ գնալ ի ճանապարհս քո,
չարչարիլ մինչեւ ցմահ վասն անուանդ քո,
մտանել ի փառս
եւ դասիլ ընդ սուրբս քո,
եւ ուրախանալ միշտ ընդ կամարարս քո:

95 *Գթա՛ Տէր ի մեղուցեալ եւ յեղկելի անձն իմ.*
խափանեա՛ զանառակ ցանկութիւնս իմ.
սրբեա՛ զաղտեղութիւն մեղաց իմոց,
եւ քաւեա՛ զանօրէնութիւնս իմ.
բժշկեա՛ զվիրաւորեալ հոգիս,
եւ առողջացո՛ զհիւանդացեալ մարմին իմ.
ցրուեա՛ զչարն յինէն եւ ժողովեա՛ յիս զբարիս,
եւ լիր զպակասութիւնս իմ զօրութեամբ քո Տէր:

96 *Առաջի քո անկանիմ եւ խնդրեմ զթողութիւն մեղաց իմոց.*
զպաղատանս իմ ընկալ, եւ քաւիչ լեր յանցանաց իմոց.
պայծառացո՛ եւ լուսաւորեա՛ զխորհուրդս եւ զմիտս իմ.
կարողացո՛ զմարմին իմ
անդադար կալ ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ:

97 *Զանկեալս մեղօք կանգնեա՛, Տէր,*
եւ զխոցեալս ի թշնամւոյն դեղապատեա՛.
բարձ զցաւս մեղաց,
եւ վերացո՛ զկակիծ յանցանաց.
յափշտակեա՛ ի դառն դահճաց,
եւ ազատեա՛ յանողորմ տանջանացն,
եւ ի մարմնական յղփանաց հեռացո՛,
եւ ի դասս ճգնաւորացն դասեցո՛:

93 Unite me to Your tender love, O Lord,
Release me for I am confined in the jail of my transgressions,
Cut off the bond of [my] sins.
Lead me onto the path of righteousness.
Prepare a place of shelter and crown me among Your saints.[84]

94 Give me a share, O Lord, in Your divine love
that I may love Your commandments,
that I may walk on Your paths,
that I may suffer unto death for the sake of Your name,
that I may enter into Your glory,[85]
that I may be enrolled among Your saints,[86]
and that I may rejoice always with those who have done Your will.

95 Have pity, O Lord, upon my sinful and miserable soul.
Bring an end to my licentious desires.
Cleanse the impurity of my sins
and pardon me for my iniquities.
Heal my wounded spirit
and cure my sickened flesh.
Drive out from me [all] evils and gather up in me [all] good things;
Fill up my deficiencies, O Lord, with Your power.

96 Before You I prostrate myself and beg forgiveness for my sins.
Receive my entreaties and grant me pardon for my transgressions.
Enlighten and illumine my mind and my thoughts,
give strength to my flesh
that I might always stand and give praise to Your Holy Name.

97 Raise me up, O Lord, for I have fallen into sin,
and cure me for I have been wounded by the enemy.
Remove the pains of [my] sins
and take away the afflictions of [my] transgressions.
Snatch [me] away from brutal torturers,
and free [me] from merciless torments.
Keep me far from carnal gluttony
and enroll me among the ranks of ascetics.

---

[84] Cf. Revelation 2:10.
[85] Cf. Luke 24:26.
[86] Cf. Psalm 69:28.

98 *Լե՛ր վերակացու եւ պահապան անձին իմոյ, Տէր իմ Յիսուս.*
պահեա՛ զիս ի դիւաց, եւ փրկեա՛ զիս ի մարդկային փորձանաց:
Հակառակողաց յաղթեա՛,
եւ կացո՛ զիս ի մէջ պատերազմողաց՝ քաջ եւ ընտիր լինիլ.
գործակցեա՛ ինձ լինիլ քաւարան մեղաց,
եւ համբերել վչտաց առաքինաբար գործովք
եւ հանդիպիլ քում աստուածային չնորհաց:

99 *Վա՛յ ինձ Տէր՝ վա՛յ ինձ, զի մեղօք կործանեցայ,*
եւ մտօք իմովք աղտեղացայ.
ի բարեաց ունայնացայ, եւ ի սիրոյ ցամաքեցայ.
ի լալոյ խաւարեցայ, եւ ի գնալոյ դադարեցայ:
Ոչ ունիմ աչս լալոյ եւ արտասուաց,
ծփիմ տարակուսեալ,
զի յոյս եւ ակն բարւոյ ոչ ունիմ:

100 *Կանգնեա՛ Տէր՝ զտարաբերեալ անձն իմ,*
որ լի եմ մեղօք եւ անթիւ յանցանօք.
եւ խարչեալ եւ տրոհեալ եմ ամենայն անդամօքս
յոտից մինչեւ գգլուխս ապականեալ,
եւ չի՛ք հնար բժշկութեան՝ եթէ ոչ ի քէն Տէր իմ Յիսուս.
խոնարհեա՛ առ վիրաւորեալս դեղատուութեամբ,
եւ մի՛ գարչիր ի չարահոտ ախտացելոյս մեղօք:

101 *Հեռացո՛ Տէր՝ զբերան իմ ի բամբասելոյ,*
եւ զլեզու իմ ի չար խօսելոյ,
զաչս իմ յարատ հայելոյ,
եւ զականջս իմ ի չար լուր լսելոյ,
զձեռս իմ ի յափշտակելոյ,
եւ զոտս իմ ի յանառակ գնացս երթալոյ,
եւ զամենայն անդամս իմ պարսպեալ զգաստացո՛՝
միշտ զհաճոյս քո կատարել:

98 Be the overseer and guardian of my soul, my Lord Jesus,
Protect me from demons and save me from human temptations.
Overcome those who oppose me,
Help me to stand courageous and distinguished in battle.
Let me be a co-worker in the pardoning of sins
that, with virtuous deeds, I may persevere in affliction
and obtain Your divine grace.

99 Woe to me, O Lord, woe to me, for I have come to ruin in my sins,
and in my thoughts I have defiled myself.
I am bereft of [all] good, and am drained of all love.
I have been so blinded by weeping[87] that I can no longer walk;
I do not have eyes for weeping or for lamentation.
I am so tossed and shaken about,
that I no longer have hope or expectation of [any] good.

100 Re-establish, O Lord, my floundering soul.
I am full of sins and innumerable transgressions,
in all my limbs there is burning[88] and racking pain.
From my feet to the very top of my head I am disfigured,
and there is no means for healing except from You, my Lord Jesus.
Deign to heal me for I am wounded,
and do not be repulsed by my foul and morbid sins.

101 Keep, O Lord, my mouth far away from slander,
and my tongue from evil speech,[89]
my eyes from too much staring,
my ears from listening to evil rumors,
my hands from robbery,
my feet from going on lewd paths.
Rouse and protect all my limbs,
that they may always accomplish Your pleasure.

[87] Cf. Lamentations 2:11.
[88] Cf. Job 30:17.
[89] Cf. Psalm 34:13, 1 Peter 3:10.

102 *Մեղա՛յ քեզ Տէր՝ մեղայ.*
զի յանցեայ զպատուիրանաւ քով.
ի լուսոյ կենաց ելայ
եւ մտի ի խաւար մեղաց.
ցանկանալով ադտեղութեան՝ ի սիրոյ քոյ հեռացայ,
ըմբռնեցայ ի չարէն՝ եւ եղէ որդի կորստեան,
ողորմեա՛ ինձ բազմամեղիս բարերար,
զի դու միայն ես մարդասէր:

103 *Ի քեզ Տէր ապաւինիմ՝*
որ քաւարան ես մեղաւորաց,
բարւոյ չտեմարան,
եւ փախուցելոյս դարան,
զթչնամին իմ արա՛ փախստական:
Օգնական զայլ ոք ոչ ունիմ,
բայց զքեզ միայն ունիմ պահապան անձին իմոյ.
ի վտանգից փրկեա՛,
ի յորոգայթից ապրեցո՛ւ,
եւ արժանի արա՛ զիս լինիլ որդի լուսոյ քո յաւիտենին:

104 *Ողորմեա՛ ինձ Տէր կենաց*
եւ քաւիչ մեղաց,
կատարիչ խնդրուածոց
եւ արձակիչ կապանաց,
բաչխող պարգեւաց
եւ տուիչ ամենայն չնորհաց:

105 *Լո՛ւր Տէր զաղաչանս իմ, եւ ընկալ զպաղատանս իմ.*
քաւեա՛ զյանցանս իմ, եւ կատարեա՛ զխնդրուածս իմ.
արձակեա՛ զկապանս իմ եւ բժչկեա՛ զհոգի իմ.
առողջացո՛ զմարմինս իմ, եւ ուղղեա՛ զգնացս իմ.
փութացո՛ զիս ժամանել յօթեւանս սրբոց քոց:

106 *Հալածեա՛ Տէր՝ զբազում ախտաժետութիւնս իմ,*
զցաւս ի մարմնոյս եւ զադտ ի հոգւոյս,
զքուն ի գլխոյս եւ զյագումն յորկորոյ:
Պահեա՛ զխորհուրդս իմ անզբաղ, զսիրտ իմ սուրբ,
եւ զմիտս իմ լուսաւոր եւ զգաստ,
զցանկութիւնս իմ առ քեզ,
եւ զյօժարութիւն յաղօթս ի տուէ եւ ի գիչերի:

102 I have sinned against You, O Lord, I have sinned,[90]
for I have transgressed Your commandments.
I have gone out from the light of life,
and I have entered into the darkness of sin.
In my desire for impurity I have gone far from Your love.
I am overtaken by evil and I have become a child of perdition.
Have mercy on me, a great sinner, O Beneficent One,
for You alone are the Lover of mankind.

103 In You, O Lord, I take my refuge,
for You are a place of atonement to sinners,
a treasure house of good,
and a safe-house for those who are fleeing.
Make my enemy a fugitive.
I have no other helper,
except You alone, Protector of my soul.
Deliver me from danger,
Rescue me from the traps,
and make me worthy to become a child of Your light forever.

104 Have mercy on me, O Lord of life
Who forgives our sins,
Who fulfills our petitions,
Who breaks our bonds,
Who distributes gifts,
and Who gives out all graces.

105 Hear, O Lord, my prayer and receive my supplications,
Pardon my transgressions and bring to fulfillment all my petitions.
Break my bonds and heal my spirit,
Restore my flesh and make straight my paths.[91]
Make me arrive quickly at the dwelling place of your saints.[92]

106 Cast out, O Lord, my many sicknesses,
afflictions of my body and stains on my soul,
slumber from my head and satiety from my throat.
Keep my thoughts undisturbed and my heart pure,
my mind illumined and alert,
my desires for You,
and my inclination for prayer day and night.

---

[90] Cf. Psalm 51:4.

[91] Cf. Psalm 5:8.

[92] Cf. Matthew 3:3, Mark 1:3, Luke 3:4, John 1:23.

107 *Բղխեա՛ Տէր՝ ի գլուխ իմ աղբիւր վտակաց,*
առոգեա՛ եւ զանդս մտաց իմոց.
զաղտ յանցանաց իմոց լուա՛,
եւ սրբեա՛ զթարախս վիրաց իմոց.
զփուչ մեղաց իմոց խլեա՛
եւ տնկեա՛ զբոյս կենաց:
Ածեցո՛ Տէր զարդարութիւն,
եւ նուաստացո՛ զանօրէնութիւն.
մեռո՛ զմարմնոյս ցանկութիւն,
եւ նորոգեա՛ զհոգւոյս կենդանութիւն:

108 *Կոչեա՛ Տէր՝ զմեղուցեալ անձն իմ ի քեզ,*
զի մերձենալ առ քեզ ոչ իշխեմ.
պատկառիմ յամօթոյ եւ զարհուրիմ ի գործոց իմոց.
ոչ ունիմ առ քեզ համարձակութիւն,
զի ես ինձէն եմ կորուսեալ.
ի սուրբ պատուիրանաց քոց հեռացայ
եւ մերկացայ ի փառաց քոց,
այլ դու Տէր՝ գթա՛ յիս եւ ողորմեա՛,
զի ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց:

109 *Ոչ իշխեմ Տէր՝ անյոյս լինիլ,*
զի ողորմած ես եւ գթած,
եւ փառս անճառս խոստացար դարձելոց մեղաւորաց.
այլ ես զարհուրիմ եւ դողամ, եւ երկնչիմ
ի բազում եւ յանթիւ մեղաց իմոց,
զի պատրեալ խաբեցայ յորսողէն.
եւ արդ զինչ լինիմ եղկելիս՝
որ տարակուսեալ եմ ի կենաց եւ տարագրեալ:

107 Pour, O Lord, onto my head a fountain of running water,
Irrigate the fields of my mind,
Wash away the stains of my transgressions,
Cleanse the pus from my wounds,
Pluck out the thorns of my sins
and plant the herb of life.
Increase, O Lord, my righteousness
Suppress my lawlessness,
Kill the desires of my flesh
and renew the vitality of my spirit.

108 Summon, O Lord, my sinful soul to Yourself
for I am incapable of drawing near to You.
I am covered with shame and am in dread over my deeds.
I have no freedom before you,
for I am dragging myself into ruin.
From Your holy commandments I have distanced myself,
and I have stripped myself of Your glory,[93]
but You, O Lord, have pity on me and have mercy,
for I am a creation of Your immaculate hands.[94]

109 I am not able to fall into despair,
for You are merciful and compassionate,
and You promised ineffable glory to sinners who repent.[95]
But I am terrified, trembling, and in great fear
due to my many and innumerable sins,
for I have been deceived and seduced by the hunter.
And now, how miserable have I become
who am banished and excluded from salvation.

[93] The phrasing is from Job 19:9, although there Job claims that it is God who stripped him.

[94] The notion that God created using His hands stems from Job 10:8 and Psalm 118:73; cf. Agat'angeghos, *Patmut'iwn*, 152: ***ստեղծեալ զմարդն ձեռաւք իւրովք***. Some later authors identified these hands as the Son and the Holy Spirit.

[95] Cf. 1 Corinthians 2:9.

110 *Արա՜ դիս Տէր՝ ի սուգ եւ յարտասուս վասն մեղաց իմոց,*
դի ծանրաբեռնեալ եմ անօրէնութեամբ
եւ յագեալ աղտեղի խորհրդով.
չատ ներեցեր ինձ, դի ոչ խրատեցեր դիս ի մարմնի.
արդ սարսեալ դողամ, դի ոչ մնան ինձ այսպիսի չարիք:
Աղաչեմ բարերար Տէր՝
մի՛ կոչեր դիս յատենի,
եւ տանջանաց մի՛ մատներ դիս.
այլ փրկեա՛ ի հրոյ գեհենին
եւ ի վտանգից ապրեցո՛ եւ ողորմեա՛ ինձ,
դի դու միայն ես մարդասէր:

111 *Վա՛յ ինձ Տէր՝ դի ծփանք տարակուսանաց պատեն դիս,*
եւ դսիրտ իմ խռովեն.
դոր աղօթեմ՝ ոչ գիտեմ,
սաղմոսեմ՝ եւ ոչ իմանամ.
չրթունք իմ բարբառի,
եւ միտք իմ ճողոպրեալ յածի այսր եւ անդր՝
եւ գկայումն ոչ ունի, եւ ի պէտս իմ ոչ գտանի,
եւ ուր կամիմ դի իցէ, անդ ոչ դադարի.
ոչ տեսանի արդեօք եւ ոչ ըմբռնի.
դուր աշխատիմ եւ ոչ ինչ օգտիմ.
որպէս ձայն հնչեալ պղնձի կամ ծնծղայի՝
թափուր եւ ունայն գտանիմ,
եւ անպտուղ լինիմ յամենայն բարեաց:

110 Lead me, O Lord, into mourning and lamentation over my sins,
for I am overburdened with my unrighteousness
and am sated with my filthy thoughts.
Be very forgiving to me whom You never chastised in the flesh.
Now I am shuddering and trembling lest such evils remain in me.
I pray to You, O beneficent Lord:
Do not summon me to Your throne,
or hand me over to torment,
Rather, save me from the fires of Gehenna.[96]
Deliver me from punishments and have mercy on me,
for You alone are the Lover of mankind.

111 Woe to me, O Lord, for waves of anxiety beset me
and they agitate my heart.
I do not understand what I am praying;
I recite a psalm but I do not understand.
My lips utter the words,
but my mind roams and wanders here and there;
It has no stability and it is never found at my tasks,
wherever I wish it to be it does not remain there.
It certainly is not seen and it is not controllable;
At whatever I am working it gives me no help.
Like the noise of a clanging gong or a cymbal,[97]
I find myself empty and void,
and I am barren of all good deeds.

[96] Cf. Matthew 5:22, and parallels.
[97] Cf. 1 Corinthians 13:1.

112 Ընկալ Տէր զմոլորեալս՝
որ փախուցեալ կամ ի լերինս,
որպէս ծառայ չար ի Տեառնէ հալածեալ եմ վասն մեղաց:
Եւ ի սուրբ եղբարց հրաժարեալ եմ,
ի սուրբ պաշտամանց հեռացեալ.
զի սիրող էի մեղաց եւ նախատինք կրօնաւորաց,
անյագ ի գրկանաց եւ խափանիչ սուրբ պատուիրանաց:
Անգութ էի աղքատաց, եւ հակառակ սպասաւորաց.
անողորմ հիւանդաց էի եւ անմխիթար աչխատողաց.
չէի իսկ արժանի կեալ ի մէջ ճգնաւորաց:

113 Հանգո՛ Տէր՝ զչնորհս հոգւոյդ սրբոյ ի վերայ իմ,
որ միայն եմ ի պատերազմի առանց օգնականի.
սրբեա՛ Տէր՝ զտաճար հոգւոյ իմոյ,
եւ առ իս լե՛ր ընդ երեկոյս.
բա՛ց զաչս հոգւոյ իմոյ,
եւ լուսաւորեա՛ զմիտս եւ զխորհուրդս իմ:
Տո՛ր ինձ զօրութիւն Տէր իմ Յիսուս,
եւ ընկա՛լ զօրհնաբանութիւն բերանոյ իմոյ.
ի խոր քնոյ գիչերայ զարթո՛ զիս
գոհանալ եւ օրհնել զքեզ,
որով զմեղս իմ քաւեցից.
չնորհեա՛ ինձ սուգ եւ արտասուս լալոյ
եւ սգալոյ եւ անդադար աղօթելոյ առաջի քո:

114 Դատեա՛ Տէր՝ զդատապարտողն իմ՝
որ յանդգնի ի վերայ իմ,
մարտ եղեալ ընդ իս
ցանկութեամբ եւ անժուժկալութեամբ,
ծուլութեամբ եւ որկորստութեամբ,
փառասիրութեամբ եւ մարդահաճութեամբ,
բարկութեամբ եւ սրտմտութեամբ,
ատելութեամբ եւ չարաչար հայհոյութեամբ,
սնափառութեամբ եւ սնապարծութեամբ,
հպարտութեամբ եւ ամբարտաւանութեամբ,
բանիւք եւ գործովք, եւ խորհրդովք զօրաժողով լինի ի վերայ իմ,
եւ ընկղմէ զիս ի խորս չարեաց:

112 Receive, O Lord, me who have strayed,
and have fled into the mountains;
Like an evil servant I have been banished from the Lord
because of my sins.
I have been renounced by the holy brothers,
and removed from the sacred services,
For I was a lover of sin and an offence to ascetics,
insatiable for fraud and a suppressor of the holy commandments.
I had no compassion for the poor and was hostile to servants;
I was without mercy for the sick and I offered no comfort to the weary.
I was, therefore, the most unworthy among the ascetics.[98]

113 Let, O Lord, the grace of Your Holy Spirit rest upon me
who am alone in battle without any help.
Purify, O Lord, the temple of my spirit,
and be with me throughout the evening;
Open the eyes of my spirit,
and illumine my mind and my thoughts.
Give me strength, my Lord Jesus,
and receive the praise from my mouth;
Wake me from the deep sleep of the night
to bless You and to praise You
by which I might atone for my sins.
Grant that I may mourn, weep tears of lamentation,
and pray before You continuously.

114 Condemn, O Lord, that one who condemns me,
who boldly rises up against me,
and wages war against me
with desires and intemperance,
with idleness and gluttony,
with vainglory and love of flattery,
with anger and indignation,
with hate and excessive blasphemy,
with vanity and conceit,
with pride and haughtiness.
With words, deeds, and thoughts he levies his army against me
and plunges me into the depths of evil.

---

[98] In lines 6 and 10, I have translated two different words as "ascetics": **կրօնաւոր** and **ճգնաւոր**. Generally, these two words both indicate, in a non-specific way, one who toils away at asceticism — often a monk, but not necessarily so; the former is the word that the author of these prayers uses when he pleads to be enrolled among them, #97, line 8, above. It is, in any case, an instance where Armenian has a slightly larger vocabulary than does English.

115 *Սփռեա՛ Տէր՝ զչնորհս քո ի վերայ մասանց անդամոց իմոց.*
լցո՛ Տէր՝ զմարմին իմ արիութեամբ եւ ժուժկալութեամբ,
եւ զհոգի իմ երկիւղիւ եւ գողութեամբ.
զսիրտ իմ սիրով եւ արդարութեամբ քո,
եւ զմիտս իմ լուսով եւ իմաստութեամբ քո.
զխորհուրդս իմ հանճարով եւ գիտութեամբ,
եւ զոտս իմ գնալ ի շաւիղս արդարութեան.
զձեռս իմ չօչափելով ի գործս ապաչխարութեան,
եւ զբերան իմ անդադար սաղմոսել քեզ գոհութեամբ.
զաչս իմ յորդաբուղխ արտասուօք,
եւ զհոտոտելիս իմ հոտոտել պատրաստես զհոտ գիտութեան ի կեանսդ,
զլսելիս իմ լսելով զձայնն աւետեաց որ ասէ.
«*Թողեալ լիցին քեզ ամենայն մեղք քո*».
եւ թէ «Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ»:

116 *Մինչեւ յե՞րբ Տէր՝ անսաս չարագործին՝*
որ ոչ յագի իմով կորստեամբ,
այլ հանապազ սկիզբն առնէ չարեաց,
եւ ի բաց կորզեալ խափանէ զիս
ի բարեաց եւ յառաքինութեանց.
եւ հեռացուցանէ զիս ի սրբութեանց,
եւ յահւտենից կենաց արտաքս հանէ զիս:
Խաւարեցուցանէ զլուսաւորութիւն աչացս,
եւ ապականելով գերէ զմիտս իմ
եւ վարէ զիս ի չար ծառայութիւն յանցանաց.
եւ ի ձեռս անօրէնն դահճաց մատնէ զիս,
եւ տանի ի տեղի չարչարանաց,
եւ արկանէ ի բանտ կապանաց մահու,
կացուցանէ ի մէջ խաւարասէր սպասաւորաց,
եւ ի տոռոմս մեղաց կապէ զիս:
Եւ արդ ես եղկելիս զի՛նչ լինիցիմ,
եթէ ոչ դու Տէր՝ օգնեսցես ինձ:

115 Spread, O Lord, Your grace over every inch of my limbs;
Fill, O Lord, my flesh with courage and patience,
my spirit with fear and trepidation,
my heart with Your love and fidelity,
my mind with Your light and wisdom,
my thoughts with intelligence and knowledge,
my feet to go on the paths of uprightness,
my hands to put to the works of repentance,
my mouth to sing psalms to You with continual praise,
and my eyes with copious tears.
Prepare my nostrils to smell the scent of knowledge in You, O Life,
my ears to hear the voice of the Good News that says:
"May all your sins be forgiven you!"[99]
and "Today, salvation has come to this house."[100]

116 How long, O Lord, will You give ear to this evildoer,
who is not content with my destruction,
but who makes me begin over and over in evil [deeds],
and snatches me away prohibiting me
from good [deeds] and virtue,
and distances me from holiness
and draws me away from eternal life.
He darkens the light of my eyes,
corrupts and seduces my mind,
and drives me into evil servitude to transgressions.
Through my iniquity he brings me to the executioners,
hands me over to the place of torture,
casts me into the prison house of death,
sets me among those servants who love darkness,
and binds me with the cords of sin.
So now what shall I, who am so deplorable, become
if You, O Lord, will not help me?

[99] Matthew 9:5, and parallels.
[100] Luke 19:9.

117 Տե՛ս, Տէր, զլալիս եւ զողբալիս,
զպաղատելիս եւ զեղկելիս,
ինձ ողորմեա՛ անօրինելոյս,
եւ չնորհեա՛ յորդ արտասուս ի գիշերի,
եւ ծագեա՛ գթութեամբ դնչոյլ չնորհաց առաւօտու։
Բա՛ց զխաւարեալ աչս սրտի իմոյ,
եւ բժշկեա՛ զհիւանդացեալ հոգի իմ.
ընկա՛լ զդարձ մեղաւորիս,
եւ մի՛ բարկանար բազմամեղիս՝ Տէր իմ Յիսուս.
եւ քանզի անթիւ ունիմ զչարիս,
ՓՆջեա՛ յինէն եւ տո՛ւր ինձ զչնորհս բարեաց։

118 Համարձակիմ Տէր, աղօթել առ քեզ,
բայց ոչ գիտեմ զհաճոյսն քո
խնդրեմ եւ ոչ իմանամ զօգտակարն հոգւոյս.
յայտնեա՛ ինձ ողորմած Տէր, զկամս քո,
եւ ուսո՛ ինձ զպատուիրանս քո։
Զբարիս՝ զոր ոչ խնդրեմ եւ իմանամ, տո՛ւր ինձ Տէր.
եւ եթէ ոչ գործեմ զբարիս բարի արա՛ ինձ Տէր.
եւ եթէ ոչ խնդրեմ զողորմութիւն, ողորմութիւն չնորհեա՛ ինձ,
եւ զհեռացեալս առ քեզ կոչեա՛.
եւ եթէ ոչ կամիմ, բռնաւորեա՛ եւ ի քեզ կորզեա՛.
եւ եթէ կամիմ եւ եթէ ոչ կամիմ, զարձո՛ զիս.
եւ եթէ ըմբռնիմ յումեքէ, զերծո՛ զիս.
եթէ յերկրաւորս զբաղեցայց, ի խորհուրդս հոգեւորս զբաղեցո՛ զիս.
եթէ այսր եւ անդր գնալ ցնդիմ, մի՛ թողուր զիս՝
մինչեւ ըմբռնեալ տարցես
ի տեղի յարկի փառաց քոց։

119 Տէր իմ եւ Աստուած իմ Յիսուս Քրիստոս,
դու ես իմ օգնական, ի ձեռս քո եմ.
դու գիտես զօգուտն իմ, օգնեա՛ ինձ.
մի՛ թողուր զիս մեղանչել քեզ,
զի մոլորական եմ ի չար գիւաց.
մի՛ թողուր զիս հետեւիլ կամաց իմոց,
մի՛ թողուր զիս կորնչիլ ի մեղս իմ,
այլ գթա՛ յիս ի ստեղծուածս ձեռաց քոց.
մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց,
եւ զՀոգիդ Սուրբ մի՛ հաներ յինէն։

117 See, O Lord, my weeping and my groaning,
my supplications and my deplorable self.
Have mercy upon me who am such a sinner,
Grant me the grace of abundant tears in the night,
and, in Your mercy, let the light of Your grace shine in the morning.
Open the darkened eyes of my heart,
and heal my diseased spirit;
Accept the conversion of this sinner,
and do not be angry, my Lord Jesus, at me who am so sinful.
Because I possess such innumerable evil deeds,
Purge them from me and give me the grace of good deeds.

118 I am emboldened, O Lord, to pray to You,
but I do not know what pleases You.
I seek but I do not know what is beneficial to my spirit.
Reveal to me, O merciful Lord, what You wish,
and teach me Your commandments.
The good deeds that I neither seek nor understand, give to me, O Lord.
Although I do no good deeds, do good to me, O Lord,
and although I do not seek mercy, grant me mercy,
and call to me who am so far from You.
Although I am unwilling, take hold of me and snatch me for Yourself,
and whether I am willing or unwilling, bring me back,
and if anything else lays hold of me, snatch me away.
If I become occupied in earthly things, occupy me with spiritual thoughts,
or if I heedlessly go here and there, do not forsake me
until You have snatched me and brought me
into that dwelling-place of Your glory.

119 My Lord and my God,[101] Jesus Christ,
You are my help, I am in Your hands.
You know what is beneficial to me, help me,
Do not let me sin against You,
though I wander among evil demons.
Do not let me follow my own will,
Do not let me perish in my sins,
But have compassion on me, a creation of Your hands.[102]
"Do not cast me away from Your presence
and take not Your Holy Spirit from me."[103]

---

[101] Cf. John 20:28.
[102] Cf. n. 94, above.
[103] Psalm 51:11 (50:13 Arm).

120 *Ա՛ռ քեզ ապաւինեցայ,*
բժշկեա՛ զանձն իմ զի մեղայ քեզ.
առաջի քո են ամենայն նեղիչք իմ,
եւ ոչ գոյ ինձ հանգիստ բաց ի քէն:
Տէ՛ր, կեցո՛ զիս վասն բազում ողորմութեան քոյ,
քանզի ամենեքեան յարուցեալ են ի վերայ իմ,
որք խնդրեն զանձն իմ կորուսանել դնա.
եւ զի դու կարող ես եւ հզօր յամենայնի, փրկեա՛ զիս:

121 *Մի՛ հայիր Տէր՝ ի մեղկեալ սիրտս*
եւ ի զազրասէր մարմինս իմ,
զի հող եմ եւ մոխիր.
սիրեմ զերկրաւորս,
եւ ոչ փափագիմ նայիլ յերկնայինսն.
այլ միշտ հեչտանամ ի չարիս,
եւ ոչ տեսանեմ զանվախճան զփառսն.
եւ ոչ յիշեմ զառաջին սուրբ հարսն զերանելիսն,
այլ ընդ տիղմն աչխարհիս թաւալիմ,
եւ ոչ մաքրեալ վերանամ դասիլ ընդ առաքինիսն:
Եւ զի մոռանամ զերկիւղ դատաստանին,
եւ ոչ զողամ յահագին զառն տանջանացն՝
որ կայ պահեալ մեղաւորաց.
եւ ես ծուլանամ անհոգ լինելով ի փրկութենէ կենաց.
չնորհեա՛ ինձ Տէր՝ սուգ եւ կոծ
անհանգիստ եւ առատ արտասուս ապաչաւանաց:

122 *Մի՛ յանդիմաններ զիս Տէր յաւուրն մեծի ահեղին,*
եւ մի՛ յատենի հրապարակին կացուցաներ զիս ամօթալի,
եւ ի տեղի ատենին մի՛ խայտառակեր զիս,
եւ մի՛ կչտամբեր յատեան դատաստանին,
եւ մի՛ թողուր ինձ լսել զոչ գիտեմն,
եւ զահաւոր բարբառն ահարեկ՝
որ ասէ, երթա՛յք յինէն ի հուր գեհենին.

120 To You have I fled for refuge,
Heal my soul for I have sinned against You;[104]
All my afflictions are before You,
and there is no respite for me except from You.
O Lord, save me because of Your great mercy,
because everyone has risen up against me,
and they seek to destroy my soul.
Because You are all-powerful and all-mighty, deliver me.

121 Do not look, O Lord, upon my languishing heart,
nor upon my disfigured flesh,
for I am dirt and ashes.
I love earthly things,
and I have no desire to look on heavenly things.
Rather, I always find pleasure in evil things,
and I do not see [Your] endless glory.
I do not remember those ancient holy and blessed fathers,
but I am wallowing in the mire of the earth;
I do not rise up cleansed to stand among the virtuous,
Because I forget the dreadful judgement,
and do not tremble at the horrible and bitter torments
that are reserved for sinners,
and I live in idleness, heedless of the salvation of life.
Grant to me, O Lord, weeping and mourning,
with incessant and abundant tears of repentance.

122 Do not reproach me, O Lord, on that great and dreadful day,[105]
Do not let me stand full of shame at the throne of Your tribunal;
Do not put me to shame in the place of Your throne,
and do not admonish me at Your judgement seat.
Do not abandon me and let me not hear that "I do not know…,"[106]
or that dreadful, horrible phrase:
"Go from me into the fires of Gehenna."[107]

---

[104] Psalm 41:4 (40:5 Arm).
[105] Cf. Daniel 9:4, Joel 2:31, Malachi 4:5.
[106] Luke 13:27, but cf. also Matthew 7:23.
[107] Matthew 25:41, and cf. Mark 9:43.

եւ մի՛ ի բաց մերժեր ընդ վատ եւ ընդ չար ծառային.
եւ ի ձեռն անողորմ կապողի մի՛ մատներ դիս,
եւ մի՛ տար կերակուր որդանց թունաւորաց
ի մեջ բորբոքեալ բոցոյ,
եւ մի՛ արկաներ դիս ի խաւար սառնամանեաց տարտարոսին.
այլ փրկեա՛ դիս ի սաստիկ կայծականց հրոյն,
ի բոցեղէն գետոց արչաւանացն,
ի սաստիկ լալագին եւ խիստ տանջանացն
եւ յողբոց տարակուսանաց,
ի կափկափելոյ ատամանցն,
ի տոչորմանէ խաւարային բոցոյն
եւ ի դժնդակ դառն աղէտից խորովելոյն,
ի բոցածաւալ եւ ի չրջապատ հրոյն
եւ ի կողկողաձայն եւ յանդադար վայոյն:

123 *Բազմացաւ Տէր՝ անօրէնութիւն ի վերայ իմ*
իբրիւ զբեռն ադի կամ կապարի.
բազում է ախտ ի հոգիս իմ,
եւ անխտիր եմ ի մեղս մարմնոյ,
եւ դանադան չարեօք լցեալ եմ:
Բայց այլ ինչ ունիմ վատթարագոյն՝
դանդգնութիւն մարմնոյ իմոյ,
որ քան զամենայն չարիս է դառնագոյն.
եւ զի յաղօթեկն իմում ձանձրանամ,
եւ ի սաղմոսելն ոչ իմանամ.
ի խնդրել զերանութիւն պղերգանամ,
եւ յերկիւղէ չնորհաց դատարկանամ.
տկարանամ մարմնով,
եւ արձան ադի սիրտ իմ լինի.
եւ ոչ ծագէ ի ներս լոյսն անչիջանելի,
եւ յաւուրն չարի ոչ սարսեալ դողամ:

Do not drive me out as an evil and wicked servant,[108]
nor hand me over to that one who binds without mercy;
Do not give [me] as nourishment to those poisonous worms
that are in the flaming fires,
and do not cast me into dark, frigid Tartarus.[109]
Deliver me from those extreme flames of fire,
from the eruptions of flaming rivers,
from violent weeping and cruel tortures,
from overwhelming lamentation,
from the gnashing of teeth,[110]
from the burning of the outer darkness,[111]
from the bitter, cruel misery of being burned,
from the flaming, swirling fire,
and from that unending wailing and moaning.

123 Wickedness has increased, O Lord, against me
like a cargo of salt or of lead;
There is much disease in my spirit,
and I am indifferent to the sins of the flesh,
I am filled with all sorts of evils.
But I have something even worse,
— no repentance for my flesh,
which is the most bitter evil of all!
I grow weary in my prayer,
and I do not know how to chant the Psalms;
I am too lazy to seek for blessing,
and I am empty of grace-bearing fear.
I am weak in my flesh,
and my heart has become a pillar of salt.[112]
That inextinguishable light does not rise in it,
and on the day of evil I neither tremble nor quiver.

---

[108] Cf. Matthew 25:26.

[109] With Classical roots going back as far as Homer (*Iliad* 8.13–16) and Hesiod (*Theogony* 713–735), Tartarus was a name for the underworld. The name enters biblical literature in 1 Enoch, where Tartarus is understood to be the place below Hades where two hundred fallen angels were imprisoned, a tradition preserved in 2 Pet 2:4, though not generally reflected in English translations; it is perhaps of interest here to note that the name Tartarus is found in the Armenian version of this verse but not in the Syriac.

[110] Cf. Matthew 8:12, 13:42, and parallels.

[111] Cf. Matthew 8:12, 22:13, and parallels.

[112] Cf. Genesis 19:26.

124 Շնորհեա՛ ինձ Տէր՝ երկիւղ սրբութեան եւ սգոյ,
եւ յորդեա՛ առ իս աղբերս արտասուաց,
եւ թեթեւացո՛ դժանրութիւն բեռանց իմոց,
եւ աճեցո՛ առ իս զսուրբ աղօթս:
Փութացո՛ր Տէր՝ եւ եկ ի խնդիր մոլորելոյս,
որ մերձեալ եմ ի վախճան կորստեան.
վասն զի խաւարեցայ ի լուսոյ,
եւ ի սիրոյ պատուիրանաց քոց խափանեցայ,
ի չար թշնամւոյն յաղթեցայ,
եւ նուաղեցայ յերկիւղէ քումմէ:
Տապալեցայ ի չար խորհրդոց չարին,
եւ ցամաքեցայ ի չնորհաց արտասուաց սիրոյ քոյ.
խաբեցայ յունայն բանից,
եւ ի լուսաւորութենէ մտաց մոլորեցայ.
աղտեղացայ ցանկութեամբ մեղաց
եւ զօր վախճանին մոռացայ:

125 Տարակուսիմ անյոյս լինելով՝
որ ոչ գոյ հնար ապաչխարութեան.
զի մարմնով տկարացայ՝
պակասեալ ի զօրութենէ,
եւ ծերացեալ նուաղեցայ.
սակայն ի քեզ ապաւինիմ Տէր իմ,
հասիր յօգնութիւն ծանրաբեռնեալ ընկղմելոյս,
եւ ազատեա՛ զիս ի չարեաց,
որ ազատիչդ ես ի յանցանաց:

126 Ընկա՛լ Տէր՝ զդոյդն եւ զչաղփադփ աղօթս իմ,
որ կամ առաջի քո դատապարտեալ.
յոյլ եւ ծոյլ ի զգաստութենէ,
մոլորեալ եմ ի մտաց լուսաւորութենէ,
եւ յերկիւղէ ունայնացեալ եմ:
Բերան իմ այլ ընդ այլոյ բարբանջէ.
աչք իմ պչնու եւ միտք իմ զբաղնու.
ոչ անբաւս աղօթեմ,
եւ ոչ սրտի մտօք խնդրեմ.
ոչ հաւատով առ քեզ գոչեմ,
եւ ոչ երկիւղիւ կարդամ.
ոչ արտասուօք հայցեմ,
եւ ոչ զողամ եւ սարսիմ վասն աւուրն պատասխանատուութեանց:

124 Grant me, O Lord, a holy fear, and mourning;
Make flow in me springs of tears,
Lighten the heaviness of my burdens,
and multiply holy prayers within me.
Make haste, O Lord, and come to seek me
who have wandered astray, nearly to the death of destruction,
For I have darkened myself from the light,
and from the love of Your commandments I have impeded myself.
By the evil of the enemy I have been overcome,
and I have grown weak in my fear of You.
I have been overcome by the wicked intentions of the evil one,
and I am dry of the grace of tears of love for You.
I have been seduced by the vanity of words,
and from the enlightenment of the mind I have wandered.
I have been soiled by my desire for sin,
and I have forgotten about the day of death.

125 I am cast into doubt, and am now without hope
that there is any means of repentance,
for I have become weak in the flesh,
deprived of all strength
and diminished by old age.
Nevertheless, I take refuge in You, my Lord,
Bring help to me who am weighed down and sinking,
and free me from evils,
for You are the one who frees us from [our] transgressions.

126 Receive, O Lord, these meager and babbling prayers
of me who stand before you worthy of condemnation,
idle and too lazy to keep vigil.
I wander away from any enlightenment of mind,
and I am completely devoid of any fear.
My mouth babbles on endlessly,
my eyes just stare out, and my mind is distracted.
I do not pray unceasingly,[113]
nor do I seek with the mind of the heart;
I do not call out to You in faith,
nor do I call to You in fear;
I do not implore You with tears,
nor do I tremble or shake over the day I must render an account.

[113] Cf. 1 Thessalonians 5:17.

Եւ արդ՝ Տէր իմ, մի՛ անսար պղերգութեանս իմոյ,
այլ փութապէս ա՛րկ յապաչխարութիւն
եւ ի բովս մաքրութեան հրոյ
սրբեալ եւ ազատեալ ի մեղաց:
Մեծաւ ջեռամբ եռացո՛ եւ յորդորեա՛ յարտասուս
եւ ի պաղատանս եւ ի խնդրուածս,
եւ տպաւորեա՛ յիս զառաջին լուսաւորութեան կերպարանն:

127 *Ողորմեա՛ Տէր՝ մեղաւորիս*
եւ յանցաւորիս անթիւ բազմութեամբ,
եւ դարձո՛ յապաչխարութիւն զգերիս վտարանդեալ,
եւ մո՛ւյծ զիս յարքունական փառսն.
առաջնորդեա՛ ինձ զվերին ճանապարհն գալ առ քեզ.
զի եթէ ոչ առաջնորդեսցես՝ ոչ կարացից գալ,
զի դու իսկ հրամայեցեր՝
եթէ «Ոչ ոք գայ առ իս, եթէ ոչ հայր իմ ձգեսցէ զնա:»
Եւ արդ՝ Տէր իմ գթած, մի՛ յիշեր զմեղս իմ
յաճախ լրբութեանս,
եւ մի՛ զանց առներ ի ծառայէս քումմէ.
մի՛ թողուր զիս մնալ ի նոյն չարիս,
եւ ի կեանս աչխարհիս սպառիլ.
այլ որպէս տէր ընթացեալ զկնի ծառայի փախուցելոյ՝
այսպէս զարձուցանելով զիս թողցես զյանցանս իմ,
եւ արասցես հաղորդս սրբոց կամարարաց քոց:

128 *Դարձո՛ Տէր՝ զցասումն բարկութեան քոյ յինէն,*
որ բազում մեղօք իմովք տրտմեցուցի զքեզ.
ողորմեա՛ ապստամբելոյս ի քէն,
եւ զանհնարին դիզեալ կոյտս մեղաց իմոց ցրուեա՛,
եւ ընդ քաղցր լծոյ ձառայութեան քոյ բեւեռեա՛ զմիտս իմ:

And now, my Lord, give no heed to my laziness,
but quickly cast me into repentance,
into the furnace of the cleansing fire
to be purified and freed from sin.
Boil [me] with a great heat and move [me] to tears,
to supplications and to entreaties;
and imprint on me that first state of illumination.[114]

127 Have mercy, O Lord, on me who have committed
an incalculable multitude of sins and transgressions;
Convert to repentance me who am a captive and in exile;
Bring me into Your royal glory,
and lead me to go with You along that upper path,
for if You will not lead me, I will be unable to go,
for it is You who commanded,
"No one comes to me unless my Father grants it."[115]
And now, my compassionate Lord, do not recall the sins
of my incessant shamelessness;
Do not dismiss me from among Your servants,[116]
nor allow me to remain in the same evils,
or to be ruined in the life of this world,
but like a master running after a fleeing servant,
will You bring me back, forgive me my transgressions,
and make me a companion of Your benevolent holy ones.

128 Turn back, O Lord, Your furious anger from me
who have grieved You by my many sins;
Have mercy on me who have rebelled against You,
Break up the enormous massive pile of my sins,
and affix my mind to the sweet yoke of service to You.

[114] Cf. Genesis 1:26–28; the fall of man is often interpreted in tradition as losing the original "garment of glory" with which God had originally clothed man.

[115] John 6:65.

[116] Cf. Matthew 24:48–51, and parallels.

129 *Պարգեւեա՛ ինձ Տէր՝ զլալումն Դաւթի եւ զողբումն Երեմիայի,*
զհառաչումն Պետրոսի
եւ զյորդառատ վտակս արտասուաց կնոջ պոռնկին,
զի նստեալ լացից անդադար ի տունջեան եւ ի գիշերի,
զի թերեւս արժանի եղէց սրբիլ
ի յաղտոյ եւ ի թարախոյ,
եւ յորդնալից վիրաց մեղաց զերծանիլ,
եւ ի բազմաբեռն չարեաց թեթեւանալ
եւ դասիլ ընդ սուրբս քո ի փառս քո:

130 *Ողորմել ինձ Տէր՝ մի՛ յամենայն,*
զի առանց վաստակելոյ քո յիս՝ ոչ երբէք գործի առ իս բարի,
եւ ոչ սերմանեալն յանգս հոգւոյ իմոյ բուսանի.
զի սերմն քո բարի՝ որ յիս սերմաննեցաւ,
ի չար թշնամւոյն քաղեցաւ.
եւ բուսեալն՝ ոմն ի տապոյ ջերմութենէ չորացաւ,
եւ ոմն ի մէջ փուշոյն անկեալ հեղձեալ ցամաքեցաւ.
մշակելով քո յիս Տէր՝ լծեա՛ զերկուս աչս եղանց՝ որ յիս,
արտասուագոչ ձայնիւ պաղատիլ առ քեզ յարաժամ,
զի արժանի գտայց ողորմութեան քում:

131 *Շնորհեա՛ Տէր՝ զխաղաղութիւն եկեղեցւոյ քում սրբոյ,*
եւ ամենայն հաւատացելոց՝
թագաւորաց եւ իշխանաց,
զօրաց եւ զօրավարաց,
ի ճակատու պատերազմաց յաղթել անօրէն բռնաւորաց:

129 Grant me, O Lord, the weeping of David,[117] the lamentation of Jeremiah,[118]
the groaning of Peter,[119]
and those copiously streaming tears of that prostitute,[120]
So that I may sit and weep incessantly both day and night,
That perhaps I might become worthy to be cleansed
from impurity and corruption,
To be delivered from the multitude of wounds from my sins,
To be relieved of the great burden of my evil deeds,
and to be enrolled with Your holy ones in Your glory.

130 Have mercy on me, O Lord, do not delay,
for without Your toiling for me, there is never any good done for me,
nor will anything sown bud forth in my soul,
for Your good seed that was sown in me
was plucked away by the evil enemy,
and of what sprouted some was dried up by the extreme heat,
and some that fell among thorns was choked and withered.[121]
Yoke to me, O Lord, two pair of oxen when You plow me,
that, with a voice that cries and weeps imploring You continuously,
I might be found worthy of Your mercy.

131 Grant, O Lord, peace to Your holy Church,
and to all the faithful,
to kings and princes,
to armies and generals,
who are in the front of combat to overcome the lawless tyrant.

---

[117] Cf. 2 Samuel 12:21.

[118] There are a number of laments in the book of Jeremiah, as well as the Book of Lamentations, traditionally ascribed to Jeremiah.

[119] Cf. Matthew 26:75, and parallels.

[120] Cf. Luke 7:38, 44.

[121] Cf. Matthew 13:18–23, and parallels.

132 *Ողորմեա՛ Տէր՝ առաջնորդաց եկեղեցւոյ,*
հայրապետաց եւ վարդապետաց,
երիցանց՝ սարկաւագաց՝ դպրաց
եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ,
առնել դիրաւունս եւ զարդարութիւն յամենայն ժամ,
հովուել զժողովուրդս քո,
եւ տքնիլ վասն հոգւոց նոցա՝ ասելով.
«Ահաւասիկ ես եւ մանկունք իմ զոր ետուր ցիս»:

133 *Ողորմեա՛ Տէր՝ կարօտելոց եւ տարակուսելոց,*
որբոց եւ այրեաց եւ նեղելոց,
վտանգելոց եւ տանց հաւատացելոց,
կենդանեաց եւ նընջեցելոց,
եւ որք ընծայարերք են եկեղեցւոյ.
աղքատաց, կերակրելոց, ողորմածաց, երկիւղածաց,
տնանկաց եւ հիւանդաց,
նաւորդաց եւ ճանապարհորդաց,
խոստովանողաց եւ ապաչխարողաց,
եւ անդարձ մեղաւորաց,
ողորմեա՛ Տէր եւ դարձո՛ զնոսա յապաչխարութիւն:

134 *Ողորմեա՛ Տէր՝ եղբարց մերոց, ծնողաց*
եւ ամենայն արեան մերձաւորաց,
կրօնաւորաց եւ միանձանց ճգնաւորաց,
եւ որք զողորմութիւն պարգեւեցին մեզ,
եւ որք յանձն արարին զինքեանս յաղօթս մեր յիչել:
Ողորմեա՛ Տէր՝ բարերար,
եւ ըստ իւրաքանչիւրոց պիտոյից բաչխեա՛ առատապէս
զչնորհս հոգւոյդ սրբոյ ի վերայ ամենեցուն սոցա.
զարդարեա՛ եւ միացո՛ ի սէր աստուածութեան քոյ:

132 Have mercy, O Lord, on the leaders of the Church,
the hierarchs and the Vardapets,[122]
priests, deacons, acolytes,
and all the 'children of the covenant'[123] of the Church,
That they may bring about justice and righteousness at all times,
to shepherd Your people,
and to be watchful over their souls, saying
"Behold my children and I whom You gave to me."[124]

133 Have mercy, O Lord, on those who are weak and in need:
on orphans, widows, and the afflicted,
the tormented and on the houses of the faithful,
on the living and on those who have fallen asleep,
and on those who have made gifts to the Church,
on the poor, the hungry, the pitiable and the frightened,
on the impoverished and the infirm,
on sailors, travelers,
confessors and penitents,
and on stubborn sinners,
Have mercy, O Lord, and lead them all to repentance.

134 Have mercy, O Lord, on our brothers, our parents,
and on all our blood relatives,
on the monks, the solitary ascetics,
and on those who freely show compassion to us,
and on those who dedicate their prayers to remember us.
Have mercy, O Beneficent Lord,
and according to each one's needs distribute liberally
the graces of Your Holy Spirit on them all;
adorn them and unite them in the love of Your Divinity.

---

[122] This last term is often translated as "doctor" or "teacher", but as these prayers seem to be a medieval Armenian composition and the role of Vardapet was a very important one in the Armenian Church, I have retained the title rather than to translate it. For the importance of the institution, see R.W. Thomson, "Vardapet in the Early Armenian Church".

[123] The "sons and daughters of the covenant" were a prominent and important class of ascetics in the early Syrian church, see G. Nedungatt, "The Covenanters of the Syriac speaking Church"; but they were also known in Armenia, see M.E. Shirinian, "Reflections on the 'Sons and Daughters of the Covenant' in the Armenian Sources".

[124] Hebrews 2:13.

135 Աղաչեմ Տէր՝ եւ անկանիմ առաջի սրբոյ խաչի քոյ,
բարեխօսութեամբ սորա զաղաչանս իմ ընկալ
եւ զխնդրուածս իմ կատարեա՛,
եւ զօրութեամբ սորա զօրացո՛ զիս ի կոչմանս յոր կոչեցայ,
եւ ի պատուիրանս քո յոր յուսացայ:
Տո՛ւր ինձ Տէր՝ զսա ի զօրութիւն եւ ի ժուժկալութիւն,
ի զգաստութիւն եւ յառողջութիւն՝
լինիլ պահապան անձին իմոյ
ի տուրնջեան եւ ի գիշերի եւ յամենայն ժամու,
ի ննջել եւ ի յառնել,
ի գնալ եւ ի դադարիլ,
ի գործել եւ ի վաստակիլ,
յաղօթել եւ ի պահել,
եւ զհաճոյս կամաց քոց կատարել:
Սա՛ եղիցի ինձ բերդ ամուր,
եւ աչտարակ հզօր յերեսաց թշնամւոյն.
զարդարեա՛ զիս սովաւ ի զարդ հոգեղինի
եւ ի լոյս իմանալի:
Եւ յաւուրն ահեղի բարբառոյ Գաբրիէլի յերեւիլ սրբոյ խաչիդ՝
լուսաւորեա՛ զխաւարեալ հոգիս,
վերանալ լուսով ընդ առաջ անմահ փեսայիդ՝
խառնիլ յերամս հայրապետաց
եւ ի դասս մարտիրոսաց եւ ի գունդս հրեշտակացն:

136 Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնիդ՝
անարատ եւ միշտ կուսիդ
եւ Յովհաննու կարապետին
եւ սրբոյն Ստեփաննոսի առաջին մարտիրոսին,
եւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ ամենայն սրբոց վկայից քոց՝
որք միացեալ ի սէր աստուածութեանդ քոյ.
լո՛ր ինձ եղկելւոս՝ եւ մեղուցելոյս ողորմեա՛.
խնդիր արա՛ ինձ կորուսելոյս,
եւ գլորելոյս ձեռնտու լե՛ր,
եւ մոլորելոյս առաջնորդեա՛,
եւ ի խաւարէ հանցես զիս ի լոյս,
եւ հոգւոյ իմոյ ազատութիւն չնորհեա՛:
Հաստատեա՛ ի սէր քո. եւ բեւեռեա՛ յերկիւղ քո.

135 I pray, O Lord, and I prostrate myself before Your holy cross,
Through its intercession receive my prayers
and fulfill my requests;
By its power, strengthen me for the calling to which I was called,
and for Your commandments in which I have placed my trust.
Give it to me, O Lord, for power and for endurance,
for adornment and for health,
that it might become the guardian of my soul,
day and night, and at all times:
when sleeping and when rising,[125]
when going and when returning,
when working and when wearied,
when praying and when fasting,
that I might accomplish what is pleasing to Your will.
May it become for me an unshakeable fortress,
and a mighty tower before the enemy.
Adorn me with it in a spiritual garment,
and in immaterial light.
And on that dreadful day that Gabriel announced[126] the appearance of Your cross,
Give light to my darkened soul,
that it might rise up in light before You, O Immortal Bridegroom,
and be united with the assembly of hierarchs,
with the bands of martyrs and the ranks of angels.

136 Through the intercession of the Holy Mother of God,
immaculate and ever-virgin,
and of John, the Fore-runner
and of St. Stephen, the first martyr,
and of St. Gregory the Illuminator,[127] and of all Your
holy martyrs,
who are united in the love of Your Divinity,
Hear me who am miserable, and have mercy on me a sinner,
Search for me who am perishing,
Give help to me who am tumbling down,
Give direction to me who am wandering;
Draw me out of the darkness into the light,
and grant freedom to my soul.
Fortify me in loving You, and affix me to the fear of You,

---

[125] Cf. Deuteronomy 6:7, 11:19; Psalm 139:2.

[126] Cf. Luke 1:30–37.

[127] It is unlikely that Ephrem had any knowledge of St. Gregory; see the introduction, above, p. 11.

զտաճար հոգւոյ իմոյ մաքրեա՛, եւ առ իս օթեւանեա՛:
Փակեա՛ զդուռն մեղաց իմոց, եւ պարսպեա՛ չուրջանակի յոսոխէ իմմէ,
եւ ի մարդոյ չարէ եւ յանիրաւէ փրկեա՛.
եւ զարդարեա՛ զիս գործովք առաքինութեամբ,
եւ պարգեւեա՛ ինձ զանճառ երանութիւն քո:
Կենդանեաց մերոց ողորմեա՛,
եւ զհոգիս ննջեցելոց մերոց լուսաւորեալ
պայծառացո՛ յարքայութեանդ երկնից:

137 *Բարեխօս առ քեզ ունիմք*
զառաքեալսն եւ զմարգարէսն, եւ զամենայն սուրբ մարտիրոսսն,
զհայրապետսն եւ զվարդապետսն,
եւ լո՛ր աղաչանաց նոցա, եւ ազատեա՛ զիս ի մեղաց իմոց.
տնկեա՛ յիս հոգի չնորհաց,
եւ յորդորեա՛ զիս բարիս գործել:
Ի ծուլանալն իմում բռնաւորեա՛,
եւ ողորմութեամբդ ի քեզ կոչեա՛.
խափանեա՛ զիս ի չար գործոց,
եւ սերմանեա՛ յիս պտուղ բարեաց.
քաջալերեա՛ զիս ի նեղութեան իմում,
եւ ի վչտի իմում մխիթարեա՛:
Արժանի արա՛ զիս Տէր՝ խաչակից լինիլ քեզ մինչեւ ցմահ,
որպէս զի ի հեչտութեանց աչխարհիս հրաժարեցայց,
եւ եղէց երանելեացն դասակից,
եւ աւազակին եղէց հաղորդ,
եւ ի դրախտին վայելեցից զկեանս անմահս:

138 *Յաւուրն իմոյ վախճանի հրեչտակ բարի ինձ առաքեա՛*
քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ.
ընդ ուղիղ ճանապարհ գնացից սրբոցն՝
հոգւոյ իմում առաջնորդեա՛,
եւ զգազանն դարանակալ կործանեա՛.
անցո՛ զիս անխոով ընդ օդս խաւարինս,
եւ զերծո՛ ի չարաժանի գաղանէն.
ապրեցո՛ եւ աներկիւղ պահեա՛,
եւ ի կայանս սրբոցն հանգո՛՝
սպասել եւ ակն ունիլ գալստեան քոյ:

Cleanse the temple of my soul, and make Your dwelling in me.
Shut up the gate of my sins, and wall me off from my adversary;
Deliver me from the evil and lawless man,[128]
Adorn me with deeds of virtue,
and bestow upon me Your ineffable blessedness.
Have mercy on us living creatures,
and make the souls of us who have fallen asleep
resplendent and illustrious in that Kingdom of Heaven.

137 We do have intercessors with You:
the Apostles, the Prophets, and all the Holy Martyrs,
the Patriarchs and the Vardapets.[129]
So hear their prayers and set me free from my sins;
Instill in me a spirit of grace,
and fill me that I may do good works.
Act forcefully against my laziness,
and in Your mercy, call me unto You;
Keep me away from evil deeds,
and sow in me the fruit of good deeds;
Give me courage in my tribulation,
and in my affliction give me comfort.
Make me worthy, O Lord, to be crucified with You unto death,
that I may renounce the comforts of this world,
and be a partner of the blessed,
a companion to the thief,
and that I may enjoy eternal life in that Garden.[130]

138 On the day of my death, send to me a good angel
to deliver my soul with gentleness;
that I may go on the straight path of the saints.
Direct my soul
and destroy that stalking beast.[131]
Bring me peacefully through dark winds,
and keep me safe from the sharp-toothed beast;
deliver me and keep me without fear,
and give me rest in the dwelling of the saints,
to wait and to look for Your coming.

---

[128] Cf. Psalms 17:13, 18:48, 43:1, 59:2, 82:4, and 140:1.
[129] See n. 122, above.
[130] Cf. Luke 23:39–43.
[131] Cf. 1 Peter 5:8.

139 *Յորժամ գաս Տէր՝ յերկնից*
ահեղ փառօք եւ անթիւ դասուք հրեշտակօք,
եւ զարհուրեալ դողան առ հասարակ տարերք ամենայն՝
երկնայինքն եւ երկրայինքս.
յակնարկել քո զօրութեանդ՝ սարսին առ հասարակ տարերք ամենայն
յահեղ փառաց դատաւորիդ
եւ անճառ դատաստանիդ եւ աննկերպի պատուհասիդ:
Յայնմ աւուր եւ դիս ընկալ Տէր՝
ընդ արդարս եւ ընդ կատարեալս քո,
եւ կարգեա՛ ընդ աջմէ դասուն,
եւ պսակեա՛ ընդ սուրբս քո.
եւ չնորհեա՛ ինձ դկեանս յաւիտենից,
եւ դանճառ բարիս քո պարգեւեա՛ ինձ.
եւ քեզ փառք արարողիդ եւ պարգեւողիդ իմոյ բարեաց:

140 *Ձիչեա՛ Տէր՝ դհոգիս ննջեցելոց մերոց*
յաւուր մեծի քումդ գալստեանդ՝
յորժամ գաս յերկնից անճառ փառօք,
ահեղ եւ սոսկալի դօրօք,
հրանիւթ եւ հոգեղէն դուարթնօք:
Ահաւոր հուր առաջի քո ընթացեալ տարածանի,
կիզէ զլերինս եւ հալէ զբլուրս,
եւ դարարածս ամենայն առ հասարակ տապալէ.
յայնմ աւուր ահեղին ողորմեա՛ ինձ մարդասէր,
դի գին սուրբ արեան քոյ եմ:
Յորժամ դաղբիւրս ցամաքեցուցանես,
եւ զգնացս գետոց դադարեցուցանես,
զծովու ջրոյն դանբաւութիւն սպառեցուցանես,
զլուսաւորս խաւարեցուցանես,
փողն ահագին ընդ տիեզերս ամենայն հնչի
եւ դմեռեալսն ամենայն զարթուցանէ
եւ զաչխարհս ամենայն դողացուցանէ,
եւ արարածք ամենայն յարուցեալ կան առաջի աստուածութեանդ
քոյ:

139 When You come, O Lord, from heaven
in awesome glory and with innumerable hosts of angels,[132]
All the elements, both heavenly and earthly,
shudder and tremble equally.[133]
With a show of Your power, all the elements quake equally
at the awesome glory of You, O judge,
at Your ineffable judgment, and Your irrevocable punishment.
On that day, receive me too, O Lord,
along with Your just ones and Your perfect ones;
Assign me to the right of the host,
and crown me among Your saints.
Grant me eternal life
and bestow upon me Your ineffable good things,
and glory be to You who make and bestow good things on me.

140 Remember, O Lord, the souls of us who have fallen asleep
on that great day of Your coming,
when You come from heaven in ineffable glory,
with the awesome and dreadful hosts,
with fiery and spiritual angels.
An awesome fire runs and spreads out before You;
It sets the mountains on fire and melts the hills,[134]
and it devastates all creation at once.
On that dreadful day, have mercy on me, O Lover of mankind,
for I am the price of Your holy blood.[135]
When You dry up the springs,
and stop up the rivers' courses,
and swallow up the immense waters of the sea,
and turn the luminaries dark,[136]
That dread trumpet resounds through the whole world,
wakes all the dead
and causes the entire earth to tremble,
and every creature rises up and stands before Your Divinity.[137]

---

[132] Cf. Matthew 16:27.
[133] Cf. Romans 8:22–23.
[134] Cf. Psalm 46:6, Isaiah 41:15.
[135] Cf. 1 Peter 1:18–19.
[136] There is no exact parallel, but cf. Revelation 6:12–14.
[137] Cf. 1 Thessalonians 4:16.

Յայնժամ դնես զդատողական աթոռ քո,
եւ ընդ քեզ բազմեցուցանես զերկոտասան առաքեալսն.
անաչառ դատաստանաւ դատիս
եւ յամենեցունց զարդարութիւն պահանջես,
զկամարարս քո պատուես եւ զապստամբեալսն
ի ձայնէ կոչման քոյ պատժես,
եւ զարդարսն փառաւորես, զմարտիրոսսն եւ զսուրբ վկայսն պսակես,
զիմաստուն սուրբ կուսանսն զարդարես,
եւ յիմար կուսանացն զառագաստին դուռն փակես,
եւ ի փառացն եւ յերանութեանցն հալածես,
զօգիսն քո ընտրես, եւ զայծիսն ի քէն ի բաց մերժես
եւ ի գեհեանն առաքես՝ ուր լալումն է աչաց,
եւ զառնագոյն կակիծ ահեղ տանջանաց,
հրեղինացն՝ չար որդանցն թունաւորաց կատողացն գազանաց
եւ կրճտումն ատամանց:
Արդ՝ գթած եւ յիս յայնժամ մարդասէր Տէր
եւ բարերար փրկիչդ իմ Յիսուս Քրիստոս.
եւ ողորմութեամբ քով գթասցիս
ի հոգիս ննջեցելոց մերոց՝
որք հաւատով ի քեզ ննջեցին,
զորս յարուցեալ կացուցանես առաջի
ահաւոր քո մեծի դատաստանիդ՝
յայնմ տիեզերական ահեղ հրապարակին:
Յորժամ յայտնին ամենայն գործք բարւոյ եւ չարի
անթագչելի ի մէջ ատենին,
յայնմ աւուր ահեղի թողութիւն չնորհեա յուսացելոց քոց,
որք յանուն քո սուրբ ննջեցին յերկրի,
զորս գնեցեր պատուական արեամբդ քով:
Ջննջեա զձեռագիր ամենայն մկրտելոցս ի քեզ,
եւ թող զպարտիս յանցանաց ամենայն հաւատացելոց
զկամայից եւ զակամայից.
ընդ աջմէ քումմէ դասեա՛, եւ զերանական զձայնն
ի լսելիս ամենայն հաւատացելոց աւետաբերեա՛ ասելով.
Եկայք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէք զյաւիտենից բարութիւնն:

At that time You shall set up Your judgment seat,
and seat the twelve Apostles at Your side;[138]
With strictly impartial justice You judge
and exact justice from them all;
You honor Your followers while those who rebel
You chastise with the sound of Your call;
You glorify the just, the martyrs and You crown the holy confessors;
The wise and holy virgins You adorn, while to the foolish virgins
You close the door to the bridal chamber,
You expel them from glory and blessing.[139]
You select Your sheep, while the goats You separate
and cast them into Gehenna, where there is weeping of the eyes
and most bitter anguish from dreadful tortures[140]:
for the angels, evil worms, venomous, ravenous wild beasts,
and gnashing of teeth.
Now, be compassionate to me at that time, O Lord who loves mankind,
and my beneficent Savior, Jesus Christ,
and in Your mercy may You have compassion
on the souls of us who have fallen asleep,
who have fallen asleep believing in You;
whom You raise up and stand before Your
great and awesome judgment seat,
in that universal, dreadful last judgment.
When all the works of both the good and the evil are revealed,
and made manifest in the midst of [Your] tribunal.
On that dreadful day grant forgiveness to those You have taught,
who in Your holy name fell asleep in the earth,
whom You purchased with Your precious blood.[141]
Cancel the bill of debt[142] for all those who were baptized in You,
and forgive all Your faithful the debts for their transgressions,
both the willing and the unwilling;
set them at Your right hand and proclaim that happy phrase
in the hearing of all Your faithful, and say:
"Come, blessed of my Father, and inherit the eternal blessings."[143]

---

[138] Cf. Revelation 21:14.

[139] Cf. Matthew 25:10–12.

[140] Cf. Matthew 25:41–46.

[141] Cf. 1 Peter 1:19.

[142] Cf. Colossians 2:14. For a full, recent treatment of the tradition of this "bill of debt" see M. Stone, *Adam's Contract with Satan*.

[143] Matthew 25:34.

141 *Արդ՝ Տէ՛ր բարերար ողորմած եւ մարդասէր,*
ընկալ զաղօթս եւ զխնդրուածս իմ,
որ պաղատիմ եւ հայցեմ ի քէն
վասն իմ եւ վասն ամենայն հաւատացելոց:
Մի՛ դարձուցաներ զերեսս քո ի ժտողէս,
այլ խոնարհեա՛ յաղաչանս իմ,
եւ լո՛ր ինձ մարդասէր Տէր,
եւ ցո՛յց յիս զսովորական քո մարդասիրութեանդ զողորմութիւնն,
եւ խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս քո.
եւ կարգեա՛ զիս ընդ աջմէ դասուն, եւ մի՛ կացուսցես ընդ ձախմէ
ընդ ուլսն՝ որք զայրացուցին զքեզ:
Եւ մի՛ պահանջեր յինէն զանհամար պարտիս յանցանաց իմոց,
եւ մի՛ դատապարտեր զմեղաւորս յայնժամ.
եւ մի՛ յայտնեսցին ծածուկ գործք ամբարշտութեան իմոյ
յանցանաց յանաչառ քո ատենին՝
առաջի հրեշտակացն եւ հրեշտակապետացն
եւ ամենայն սրբոց քոց սիրողաց:
Այլ յաղթեալ ի քումմէ մարդասիրութենէդ՝
արասցես այցելութիւն եւ ողորմութիւն մեղուցեալ ծառայիս քո.
եւ մի՛ ըստ չար գործոց իմոց հատուսցես ինձ
եւ մի՛ հրամայեր կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռօք
հանել ի խաւարն արտաքին,
ուր լալ աչացն է եւ կրտճել ատամանց.
այլ ըստ քում գթութեանդ եւ բարերարութեանդ
եւ անյիշաչարութեանդ ողորմեա՛ ինձ բազմամեղիս:
Ցայնմ աւուր զերծո՛ զիս յամօթոյն յաւիտենից,
եւ փրկեա՛ զիս յանվախճան տանջանացն,
եւ ապրեցո՛ զիս յանսպրելի պատուհասիցն,
եւ բա՛ց ինձ զդուռն ողորմութեան քոյ,
եւ մի՛ փակեր զդուռն արքայութեան:
Տէր իմ Տէր, Աստուած իմ Աստուա՛ծ՝ Յիսուս Քրիստոս,
արժանի արա՛ զիս զանարժանս յաւուրն յայնմիկ
երանութեան պարգեւաց լուսոյ
եւ անսպառ յաւիտենից ուրախութեանց
եւ բարեաց հատուցմանց սրբոցն եւ արդարոցն՝
զփառս երանելեացն վայելել միշտ,

141 Now, O Lord, beneficent, merciful and Lover of mankind,
Receive my prayer and my entreaties
that I beseech and seek from You
on my behalf and on behalf of all the faithful.
Do not turn Your face away from my pleading,
but condescend to my petitions,
and hear me, O Lord, Lover of mankind.
Show me Your familiar compassion and love of mankind,
and grant pardon to Your sinful servant.
Assign me to the right side, do not stand me on the left
with the goats who have caused You anger.[144]
Do not exact from me the innumerable debts of my transgressions,
Do not condemn this sinner at that time;
and let not the hidden deeds of my impiety and transgressions
be revealed at Your impartial tribunal,
in the presence of the angels and archangels,
and all those holy ones who love You.
But, overcome by Your Love of mankind,
May You visit and have mercy on Your sinful servant.
Do not repay me according to my evil deeds,
nor command that I be bound hand and foot
to be cast into the outer darkness,
where there is weeping of eyes and gnashing of teeth;[145]
but, according to Your compassion, Your beneficence,
and Your forgiveness, have mercy on me, a great sinner.[146]
On that day deliver me from eternal shame,
Save me from unending torments,
Free me from those intolerable punishments,
Open to me the gates of Your mercy,
and do not close the gate to Your kingdom.
Lord, my Lord, God my God, Jesus Christ,
On that day, make me, who am unworthy, worthy
of the blessing of the gift of light,
of unending, infinite joy,
and of those good gifts of the saints and of the just:
the glory that always befits the blessed,

---

[144] Cf. Matthew 25:33.

[145] Matthew 8:12, 13:42, 50, et al.

[146] This last phrase is exactly that same one made famous in Nersēs Shnorhali, ***Հաւատով խոստովանիմ***.

դի մտից արժանապէս յառագաստ անմահ փեսայիդ,
եւ ժառանգեցից զանսպառ բարիսն ընդ ամենայն սուրբս քո,
մաքուր յատակ եւ սուրբ սրտիւ՝ համարձակ երեսօք
անհատ տեսից զքեզ ընդ հրեշտակս,
եւ ընդ սուրբ սիրոցս քո
վայելեցից զանհաս զանճառելիդ
եւ զանեզր լոյս երրորդութեանդ՝ գոհանալով.
եւ զուգահաւասար արասցես ընդ սուրբս քո
յօրհնաբանութիւնս միչտ արժանապէս,
հանապազ աստուածային անստուեր լուսով քով պայծառացայց,
եւ անդադար երգով փառաւորեցից
եւ բարեբանեցից եւ վերօրհնեցից զամենասուրբ զերրորդութիւնդ,
այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն.

That I may worthily enter the bridal chamber of the immortal bridegroom,
and may inherit innumerable good things with all Your saints,
that with a pure, clean and holy heart and an open face
I may see You along with Your angels,
and that with all those holy ones who love You,
May I enjoy and praise the incomprehensible, ineffable,
limitless light of Your Trinity.
May You make me equal to Your holy ones,
to sing to You in worthy fashion unending praises,
that I might always be illuminated by Your unclouded light,
and that I may glorify with unending song,
praise and extol the All-Holy Trinity,
Now and unto the ages of ages. Amen.

Բ

Աղօթք դարձեալ նորին սրբոյն Եփրեմի:

Տէր երկնի եւ երկրի,
իշխան մահու եւ կենաց,
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց,
Քրիստոս Աստուած, յոյս եւ ապաւէն հոգւոյս իմոյ.
քեզ խոնարհեցուցանեմ գերկրպագութիւն
եւ մատուցանեմ փառաբանութեամբ մաղթանս:
Լուր պարգեւիչ՝ հայցուածոց իմոց,
որ միայնդ ես առանց մեղաց,
որ միայնդ ես սուրբ եւ ի սուրբս հանգուցեալ,
որ միայնդ ես գթած եւ ողորմած:
Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում,
եւ ըստ բազում գթութեան քաւեա՛ զանօրէնութիւնս իմ:
Ստեղծիչ իմ՝ ողորմեա՛ ինձ եւ օրհնեա՛ զիս,
երեւեցո՛ զերեսս քո առ իս եւ հաչտեա՛ ընդ իս:
Ապրեցուցիչ իմ՝ զա՛րձ առ իս, երեւեցո՛ զերեսս քո
եւ յիշեա՛ զիս յարքայութեան քում:
Դա՛րձ առ իս Աստուած փրկիչ իմ,
եւ զարձո՛ զսրտմտութիւնս քո յինէն.
մի՛ յախտեան բարկանար ինձ,
եւ մի՛ զարձուցաներ զերեսս քո յինէն.
մի՛ բարկութեամբ խրատեր զիս,
եւ մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս.
մի՛ յաւիտեան բարկանար ինձ,
եւ մի՛ յիշեր զչարիս իմ,
եւ մի՛ պարտաւորեր զիս ըստ իմում անօրէնութեանս.

PART II:

MORE PRAYERS FROM SAINT EPHREM

O Lord of heaven and of earth,[147]
Ruler over death and life,[148]
Judge of the living and of the dead,[149]
O Christ God, hope and refuge of my spirit,
to You I lay down [my] service,
and I offer my adoration with praise.
Listen, O giver of gifts, to my solicitations,
You who alone are without sin,
You who alone are holy and who give rest to the holy ones,[150]
You who alone are compassionate and merciful.[151]
Have mercy on me, O God, according to Your great mercy,
and according to Your great clemency pardon my iniquity.[152]
O my creator, have mercy on me and bless me,
show Your face to me and look kindly upon me.[153]
O my Life-giver, turn towards me, show me Your face,[154]
and remember me in Your kingdom.[155]
Turn to me, O God my Savior
and turn Your wrath away from me;
do not be angry with me forever,[156]
and do not turn Your face away from me;[157]
do not chastise me in Your anger,
and do not reproach me in Your wrath;[158]
do not be angry with me forever,
and do not remember my evil [deed]s,[159]
nor condemn me according to my iniquity;

---

147 Matthew 11:25, Luke 10:21, Acts 17:24, Tobit 10:13, Judith 9:12.
148 Cf. Sirach 11:14, Acts 3:15.
149 Acts 10:42, 2 Timothy 4:1, 1 Peter 4:5.
150 Cf. Revelation 14:13.
151 Cf. James 5:11.
152 Psalm 51:1.
153 Cf. Psalm 67:1.
154 Cf. Psalm 69:16–17.
155 Cf. Luke 23:42.
156 Cf. Psalm 79:5, 85:5.
157 Cf. Psalm 132:10.
158 Psalm 6:1.
159 Cf. Psalm 79:8.

Մի՛ յաւիտեան պահեր ոխս,
եւ մի՛ ի սպառ բարկանար ինձ:
Մի՛ ըստ մեղաց իմոց առներ,
եւ մի՛ ըստ անօրէնութեան իմում հատուցաներ ինձ:
Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց,
եւ մի՛ խնդրեր զգիր յանցանաց իմոց.
մի՛ դատապարտեր զիս, զի ես ինձէն գիտեմ զի անուղղայ եմ
եւ յանցաւոր ի մանկութենէ իմմէ,
եւ անպատասխանի յամենայնի:
Այլ դու դատաւոր հզօր եւ անոխակալ,
որ զյանցանս մեղացն թողեր դանառակ որդւոյն,
թո՛ղ եւ ինձ զպարտիս
մեղուցեալ եւ անարժան քո ծառայիս.
քանզի քո առատ բարերարութիւնդ յորժամ չիս ցուցցես,
յայնժամ երեւեսցի բարեգթութիւն քո,
որ արժանի եմ բիւր տանջանաց.
զի զամենայն գկեանս իմ անառակութեամբ անցուցի,
եւ ոչ կացի ի հրամանի քում:
Այլ քաղցրացո՛ր ինձ քաղցրութեամբ՝ քաղցր եւ բարի թագաւոր,
եւ հաչտեա՛ ընդ բազմամեղիս:
Մի՛ հայիր չիմ անհնազանդութիւնս եւ ի ծուլութիւնս.
մի՛ անարգեր զիս եւ մի՛ թողուր զիս, եւ մի՛ ընդ վայր հարկաներ զիս:
Զի թէպէտ ես զտաճար Հոգւոյդ սրբոյ ապականեցի
իմով ծուլութեամբս եւ անառակ գնացիւքս,
այլ դու գթա՛ չիս ստեղծիչ իմ ողորմած եւ անյիշաչար:
Մի՛ ապականեր զՀոգի իմ գնահենաժառանգ այրմամբն յաւիտենական.
այլ գթացեալ մարդասիրապէս՝ երկայնամիտ լե՛ր առ իս,
եւ ներեա՛ յանցանաց իմոց,
եւ չնորհեա՛ ինձ ժամանակ զղջմամբ արտասուաց եւ ապաչխարութեան:
Եւ տո՛ր զօրութիւն եւ իմաստութիւն խորհիլ
զօրէնս քո ի տուէ եւ ի գիչերի,
գործել զբարի եւ առնել զարդարութիւն առաջի երեսաց քոց:

do not hold Your anger against me forever,
and do not be angry with me at the end.
Do not deal with [me] according to my sins,
and do not recompense me according to my iniquity.[160]
Do not cast me away from Your face,[161]
and do not seek an account of my transgressions.
Do not condemn me for I know that I am indeed wayward
and a transgressor from my youth,
and I have no answer for any of it.
But You, O judge, who are mighty and without malice,
who forgave the transgressions and sins of the prodigal son,[162]
forgive also the debts of me,
who am a sinner and Your unworthy servant,
for when You manifest to me Your abundant beneficence,
then Your clemency will appear,
for I am worthy of a myriad of punishments,
I have spent my entire life in unrighteousness,
and I did not stand upon Your commandment.
But sweeten me with [Your] sweetness, O sweet and good King,
and look kindly upon me who am such a great sinner.
Look not upon my rebelliousness nor upon my slothfulness;
do not reject me, do not abandon me, and do not forsake me.
Although I have corrupted the temple of Your Holy Spirit[163]
by my slothfulness and by my dissolute lifestyle,
nevertheless, be compassionate to me, my merciful and forgiving creator.
Do not destroy my spirit in the eternal burning of hell,
but in [Your] compassion and love for mankind be patient toward me,
grant pardon for my transgressions,
and grant me time for repentance with tears and mortification.
Give [me] the strength and the wisdom to meditate
upon Your laws day and night,[164]
to do good and to act with righteousness before Your face.

---

[160] Cf. Psalm 103:10.
[161] Cf. Psalm 27:9, 88:14.
[162] Cf. Luke 15:11–32.
[163] Cf. 1 Corinthians 6:19.
[164] Cf. Psalm 119:15, 23, 48, 78.

Համբառնամ առ քեզ Տէր զաչս իմ բոլորով սրտիւ իմով.
կարդամ առ քեզ, Քրիստոս Աստուած միածին Որդի Աստուծոյ:
Որ կամաւոր խոնարհեցար յանճառ փառաց,
առներ զկերպարանս ծառայի եւ անպարտականդ
յաղագս դատապարտութեան մերոյ
համբերեցեր մինչեւ զչարչարանս խաչի եւ մահու յանճն առներ
վասն փրկութեան ստեղծուածոց քոց:
Արդ՝ որ այսպիսի սէր ունիս առ ազգս մարդկան,
եւ կամիս զի ամենայն մարդ կեցցէ
եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ,
զթա՛ ի բազմամեղս՝
զթած եւ մարդասէր Տէր,
եւ կամեա՛ց ընդ իմ փրկութիւն, եւ արա՛ ողորմութիւն ինձ
եղկելոյս թշուառականիս,
որ առաւել վիրաւորեալ եմ եւ ողորմելի քան զամենայն մարդիկ:
Զի ոչ մի օր սիրեցի զքեզ ի բոլոր սրտէ իմմէ,
եւ ոչ մի ժամ յամենայն զօրութենէ իմմէ պահեցի զպատուիրանս քո.
այլ պղերգութեամբ եւ զրօսանօք անցուցի զամենայն ժամանակս իմ,
եւ աղտեղի խորհրդովք անցուցի զկեանս իմ:
Աւուրք իմ պակասեցան, եւ անօրէնութիւնք իմ բարձրացան,
եւ ոչ գոյ ինձ յոյս փրկութեան եւ տեղի ապաւինի.
բայց միայն յուսացեալ եմ եւ ապաւինեալ յառատ ողորմութիւն քո՝
Քրիստոս Աստուած:
Եւ արդ՝ տնկեալ բղխմամբ արտասուաց աղաչեմ զքեզ,
եւ հառաչմամբ սրտի առ քեզ պաղատիմ.
մինչչեւ եմ կորուսեալ
եւ մինչչեւ է ժամանակ դարձի իմոյ հասեալ՝
չնորհեա՛ ինձ ժամանակ ապաչխարութեան,
եւ յառաջ քան զվախճանն արձակեա՛ զիս ի կապանաց մեղաց իմոց,
եւ անտես արա՛ զանթիւ անօրէնութիւնս իմ:
Որ ամենայն բարութեանց ես Տէր, եւ իշխանդ ես թողուլ զմեզս,
ծածկեա՛ եւ արա՛ անտեսութիւն անօրէնութեան իմոյ
յամենայն մեծութենէ քումմէ:
Մխիթարեա՛ զվչտացեալ եւ զտառապեալ հոգիս իմ.
եւ արժանի արա՛ զիս յայսմ հետէ ըստ կամաց քոց
քաղաքավարել զայլ եւս պանդխտութեան իմոյ ժամանակս:
Եթէ կամիմ եւ եթէ ոչ կամիմ՝ բռնադատեա՛ զիս,
եւ մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ,
մինչեւ տարեալ հասուսցես յօթեւանս արքայութեանդ երկնից:

I raise up my eyes to You, O Lord, along with my whole heart,
I implore You, O Christ God, Only-Begotten[165] Son of God.
You who willingly descended from [Your] ineffable glory,
took on the form of a servant[166] and, without guilt,
[and] because of our condemnation,
You endured [even] to take on the punishment of the cross and death
for the salvation of Your creatures.[167]
Now You who have such love toward the race of mankind
and who wish that all men should live,[168]
and come to the knowledge of truth,
have mercy on me who am such a great sinner,
O merciful Lord and Lover of mankind.
Will salvation for me and have compassion upon me
who am so miserable and wretched,
who am more wounded and pitiable than any man.
Not for one day have I loved You with my whole heart,
nor for one hour did I keep all Your commandments with all my strength,
but in idleness and in self-indulgence I have spent all my time,
and with impure thoughts I have squandered my life.
My days have come to an end and my iniquity has mounted up;
for me there is no hope of salvation nor place of refuge,
except in hoping and taking refuge in Your abundant mercy,
O Christ God.
And now that I have fallen, I beseech You with copious tears,
and with groaning heart I make supplication to You:
before I perish
and before the time of my turning back [into dust] arrives,
grant me time for repentance;
before the end loose me from the bonds of my sins,
and overlook my innumerable iniquities.
You who are Lord of all goodness, You O Prince, who forgive sins,
put aside and overlook my iniquity
in all Your greatness.
Comfort my afflicted and oppressed spirit,
and make me worthy from this point, according to Your will,
to conduct well the remaining time of my pilgrimage.
Whether I am willing or unwilling compel me,
and do not abandon me to my own will,
until You come and bear into my dwelling Your Kingdom of Heaven.

---

[165] John 1:14, 18; 1 John 4:9.
[166] Philippians 2:7.
[167] Cf. Philippians 2:7–8.
[168] Ezekiel 18:23, 33:11.

Լո՜ր Տէր՝ աղօթից անարժան ծառայիս քո,
եւ պաղատանաց իմոց ունկն դիր.
որ ասացեր՝ թէ հայցեցէ՛ք եւ գտջիք, բաղխեցէ՛ք
եւ բացցի ձեզ,
եւ այժմ բա՜ց ինձ Տէր դղուռն ողորմութեան՝
որ ողբալով կարդամ առ քեզ:
Եւ մի՛ անտես առներ զաղաչանս մեղուցեալ անձին իմոյ,
որ ոչ եկիր կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապչխարութիւն:
Արդ՝ խոնարհեալ անձամբ եւ բեկեալ սրտիւ եւ ամօթալից երեսօք
անկանիմ առաջի քո եւ աղաղակեմ առ քեզ.
Հայր, մեղա՛յ յերկինս եւ առաջի քո.
թէպէտ եւ ոչ եմ արժանի կոչիլ որդի քո
յաղագս ապականեալ վարուց իմոց,
եւ ոչ անուանել զանուն քո գարչելի բերանով իմով,
այլ համարձակիմ ի գթութիւն քո,
զի գիտեմ զքեզ քաղցր եւ անոխակալ
բազմախնամ եւ երկայնամիտ առ արարածս քո:
Եւ յաղագս այնորիկ ժտելով պաղատիմ առ քեզ.
եւ յառաջ քան զդնել ատենին աղաչեմ,
եւ նախ քան զփակել դրանն ապաչխարութեան
եւ հատանել անդարձ վճռին՝
զարտասուս իմ արկանեմ առաջի անոխակալ գթութեանդ քոյ,
ողորմած Տէ՛ր երկայնամիտ, քաղցր եւ անյիշաչար.
մի՛ ընդ քանքարաթագոյցսն դատապարտեր դիս
եւ մի՛ ընդ չիմար կուսանացն փակեր զդուռն արքայութեան քոյ.
մի՛ ընդ չար եւ ընդ վատ ծառայիցն լծակցեր դիս,
եւ մի՛ ընդ անհաւատսն եւ ընդ հերձուածողսն դներ զբաժին իմ.
մի՛ ընդ պոռնիկսն եւ ընդ չարագործսն կորուսաներ դիս,
եւ մի՛ ընդ ախտաւորսն եւ ընդ չաղախեալսն հոգւով
հաներ դիս ի կենացն:
Այլ զերծո՛ դիս յանեղրական տանջանացն,
եւ ապրեցո՛ յանհանգիստ ալէկոծութեանց,
եւ փրկեա՛ յանմահ մահուանէն,
եւ ազատեա՛ յաւիտենական ամօթոյն,
զերծո՛ ի միշտ լալոյն եւ հանապազորդ ողբալոյն:

Hear, O Lord, the prayers of Your unworthy servant,
and give ear to my entreaties,
    You who said, "Seek and you shall find, knock
    and it shall be opened to you,"[169]
so now open, O Lord, the gate of mercy, to me
    who with lamentation now calls upon You.
Do not ignore the supplications of my sinful soul,
    for You did not come to call the just, but sinners to repentance.[170]
Now with humbled soul, broken heart and a shame-filled face
I prostrate myself before You and I cry out to You,
"Father, I have sinned against heaven and before You;
    no longer am I worthy to be called Your son,"[171]
    on account of my depraved life,
    nor to pronounce Your name with my fetid mouth,
    but I take courage in Your compassion
        for I know that You are sweet and forgiving,
        and have great care and patience toward Your creatures.
For this reason I earnestly beseech You,
before [Your] long-established throne I make supplication,
and before the opening of the gate of repentance
    and the arrival of Your irrevocable judgement
I pour out my tears before Your compassion that knows no malice:
O merciful and long-suffering, sweet and forgiving Lord,
    do not condemn me along with those who hide their talents,[172]
    do not close the door of Your kingdom [on me] with the foolish virgins,[173]
    do not put me in with the wicked and slothful servant,[174]
    and do not set down my portion with unbelievers and heretics.
    Do not put me to death with fornicators and evil-doers,
        and do not cast me away from life.
Rather deliver me from interminable torments,
    free [me] from incessant troubles,
    save me from the deathless death,
    and free [me] from eternal shame.
Deliver [me] from continual weeping and from unceasing lamentation.

---

[169] Matthew 7:7.
[170] Matthew 9:13, and parallels.
[171] Luke 15:18–19, 21.
[172] Cf. Matthew 25:24–30.
[173] Cf. Matthew 25:1–13.
[174] Cf. Matthew 25:41–46.

Մի՛ տարագիր առներ եւ մի՛ մերժեր դիս
ի քո դասուցն եւ յերանաւէտ կենացն.
մի՛ անբաժին հաներ դիս ի հայրենի ժառանգութենէն,
եւ մի՛ զրկեր դիս յերկնաւոր հարսանեացն,
եւ մի՛ կարօտ պահեր դիս ի քո անճառելի տեսլենէդ:
Այլ չնորհեա՛ ինձ ընդ արժանաւորսն եւ ընդ կատարեալ ոգիսն
վերանալ լուսեղէն ամպովք ընդ առաջ քո յօդս,
եւ պարզ երեսօք եւ աչալրջութեամբ կալ առաջի քո Տէ՛ր:
Եւ վասն քո փառաւորեալ հզօր եւ ահեղ թագաւորութեանդ
մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո,
եւ մի՛ հատուցաներ ինձ ըստ անօրէնութեանս,
եւ մի՛ ամաչեցուցաներ դիս առաջի անթիւ եւ ահեղ բանակաց քոց.
Այլ ողորմեա՛ ինձ, զի ոչ ոք է հակառակ քեզ,
եւ պարգեւեա՛ ինձ զքո արքայութիւնդ:
Ընդ սուրբս քո դասեա՛,
եւ ընդ արդարսն պսակեա՛,
ընդ սիրելիսն քո օրհնեա՛,
եւ ընդ կամարարս կամաց քոց
յարատեւարճ ուրախութիւնսն ուրախացո՛
եւ առատապարգեւ փառօք փառաւորեա՛ դիս՝ Տէ՛ր,
ի լուսեղէն երամս արդարոց՝
ընդ նոսին հանգչիլ
ի վերինդ Երուսաղէմ յանստուեր
եւ յաստուածակեաց ուրախութիւնդ.
զի ընդ նոսին համաձայնեալ փառաւորեցից
զամենասուրբ զերրորդութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Do not banish me nor expel me
from Your ranks or from the life of happiness.
Do not take me away destitute from [my] paternal inheritance,
do not deprive me of the heavenly wedding-feast,
and do not keep me without Your ineffable vision.
Rather grant that with the worthy ones and with the perfect souls
I may rise with the wind on the celestial clouds to Your presence,
to stand before You, with luminous and attentive face, O Lord.
For the sake of Your glorious, mighty and awesome Kingdom
do not enter into judgement with me your servant,
do not recompense me according to my iniquity,
do not shame me before Your innumerable and awesome spirits.
Rather have mercy on me, for no one is [able to] oppose You,
and present me into Your Kingdom.
Enroll me among Your saints
and with the just ones crown [me],
among Your loved ones bless [me]
and with those who have accomplished Your will
make [me] joyful with an ever joyful joy.
Glorify me, O Lord, with abundant glory
in the light-bearing troops of the just
that along with them I may take my rest
in the heavenly Jerusalem that has no shadow[175]
and in Your divine banquet,
so that in unison with them I may give praise
to the All-Holy Trinity forever and ever. Amen.

[175] Cf. Revelation 21:23–25, 22:5.

Գ

Աղօթք նորին դարձեալ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝
մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո,
եւ մի՛ տար այլում դղատաստանս իմ,
այլ ի փառաւոր բեմին մերձենալ դիս արժանաւորեա՛.
քանզի դոր Աստուած դատի, ողորմութեան արժանի լինի։
Լսելով դայս ի հանճարեղաց եւ յիմաստնոց
եւ ի սրբոց առաքելոցն դայսոսիկ՝ ասեմ.
դի ամենայն ոք որ զթագաւոր տեսանէ,
թէպէտ եւ մեղուցեալ է՝ ոչ մեռանի։
Աղաչեմ զքեզ՝ ստեղծիչ իմ եւ փրկիչ իմ,
մի՛ դիս ի նեղելն իմում թշուառացուցաներ,
մի՛ խորտակելով չարչարեր դիս։
Քանզի եթէ արժանապէս ըստ գործոց այց արասցես ինձ,
յերկոցունց կողմանց կաղմի ինձ որոգայթ կորստեան.
դի յորժամ յիշեմ զգործս իմ դանրմբերելի,
դողումն ի վերայ իմ անկանելով խորտակեն դիս,
եւ սարսուռ դժնեայ ունի դիս
յորժամ վստահանամ հատուցումն ընդունիլ
ի հանգստեանն՝ որ առաջի կայ,
եւ ոչ կարեմ համբերել։
Եւ յառաջագոյն յայտ առնէ ատամանց իմոց կրճտումն,
որ անդ առաջի կայ ինձ ցաւքն եւ սարսուռքն։
Տե՛ս Տէր զխոնարհութիւնս իմ եւ գթա՛ յիս։
Աղաչեմ զքեզ՝ միածին Որդի Աստուծոյ,
արժանի արա՛ դիս թողութեան մեղաց,
եւ մի՛ հատուցաներ ինձ ըստ վարձուց վաստակոց իմոց.
քանզի եթէ դանօրէնութիւնս իմ պահեսցես, ո՞վ տեւեսցէ քեզ.
եւ եթէ ըստ մեծութեան քում հատուցանես մեզ ողորմութիւն,
արժանի՛ գտանիմք ի դատաստանի քում.
քանզի ամենայն բերան խցցի
եւ դատապարտեսցի ամենայն աշխարհ առաջի Աստուծոյ։
Արդ ոչ եթէ զքո չնորհսդ արհամարհելով յառաջ բերեմ դայսոսիկ,
այլ զգրեալսն խօսիմ՝ երկայնամիտ Քրիստոս։
Զի՞նչ օգուտ իցէ քեզ ի մարմնոյ իմոյ,
եթէ ի բորբոքեալ հուրն առաքեցայց.

PART III:

MORE PRAYERS FROM [EPHREM]

My Lord Jesus Christ,
do not enter into judgement with Your servant[176]
and do not hand over my judgement to another,
but make me worthy to approach Your glorious seat,
because the one whom God judges becomes worthy of mercy.
Having heard this from the intelligent, the wise,
and from the holy Apostles, I say
that everyone who sees a king,
though he be a sinner will not die.
I beseech You, my Creator and my Savior,
do not bring misery upon me in my distress;
do not torture me nor crush me.
For if You were properly to examine me according to my works
there would be a ruinous trap set for me on two sides:
for when I remember my insupportable deeds
horror falls upon me and crushes me,
violent terror seizes me;
when I consider the retribution to be received
at the rest that is to come,
I am unable to bear it.
Even before [this] the gnashing of my teeth makes clear
that sorrows and horrors stand before me.
See, O Lord, my lowliness and have pity on me.
I beseech You, O Only-Begotten Son of God,[177]
make me worthy of the forgiveness of sins
and do not recompense me according to the wages of my labors,[178]
for if You would retain my unrighteous [deed]s who could endure You?[179]
But if You render us mercy according to Your greatness
we will be found worthy in Your judgement.
Because every mouth shall be silenced
and every land shall be judged before God.
Now it is not that I bring them before You to despise Your grace
but I speak what is written, O long-suffering Christ.
What help will there be to You from my flesh
if You cast it into a flaming fire?

---

[176] Psalm 143:2.
[177] John 1:14, 18; 1 John 4:9.
[178] Cf. Jeremiah 25:14.
[179] Cf. Psalm 130:3.

արա՛ ընդ իս ըստ ողորմութեան քում զգութիւն քո,
և ծանիցի ամենեցուն չնորհք քո և երկայնմտութիւն քո:
Եթէ զդատաստան ամենայն երկրի առնես,
որպէս պատուիրանք քո յայտնեցին,
ոչ ապրեսցի մի ի հազարաց,
և ի բիւրոց ոչ փրկեսցին:
Այլ զի՞նչ հոգալով խօսիմ զայս ես տառապեալս.
աղաչեմ Փրկիչ՝ ոչ զի զուգեսցես զմեղաւորն ընդ արդարսն՝
քեզ մաղթեմ, բարերարութեան որդի,
այլ զի արժանի արասցես զգթութիւն քո սփռել ի մեզ,
յիս և ի մերձաւորս իմ:
Դարձեալ աղաչեմ և ոչ զադարեցից երբէք յայսցանէ.
զի թէ ոչ զգուչութիւն քո ձգեսցես ի մեզ,
ոչ ոք կարող է տեսանել զկեանս:
Աստուած՝ գթութեամբդ քո աղաչեմ զքեզ,
մի՛ կացուցաներ զիս ընդ ուլսն ի ձախմէ քումմէ՝
որք զայրացուցին զքեզ,
և մի՛ ասիցես թէ ոչ գիտեմ զքեզ,
այլ տուր ինձ յաղագս գթութեան քոյ
մչտնջենաւոր ողբումն և զղջումն.
նուաստացո՛ զսիրտ իմ և սրբեա՛ զսա,
զի լիցի տաճար չնորհաց քոց:
Զի թէպէտ մեղաւոր եմ և ամբարիշտ,
սակայն հանապազ զղրունս քո բաղխեմ,
զի թէ դանդաղկոտ եմ և պղերգ,
սակայն զճանապարհս քո կամիմ գնալ:
Տէր իմ և փրկիչ, ընդէ՞ր զիս լքանես.
գթա՛ յիս, վասն զի դու միայն ես առանց մեղաց.
հան զիս ի տղմոյ անօրէնութեան իմոյ,
զի մի՛ ընկղմայց յաւիտեան:
Փրկեա՛ զիս ի բերանոյ թշնամւոյն իմոյ,
զի ահա իբրև զառիւծ մռնչէ՝ կամելով կլանել զիս.
զարթո՛ զզօրութիւն քո, և եկեսցէ կեցուցանել զիս.
փայլատակեա՛ զփայլատակունս քո, և քայքայեա՛ զզօրութիւն նորա.

Deal with me according to Your mercy, Your clemency,
and all Your graces and Your patience will be made manifest.
If You judge the entire world
as Your commandments make clear,
not one in a thousand will live
and not one in ten thousand will be saved.
But what am I saying by bringing forward those who are tormented?
I beseech [You], O Savior, not to weigh sinners against the just.
I implore [You], O Son of Beneficence,
to consider it worthy to seed Your clemency in us,
in me and in those close to me.
I beseech You again and I will never cease from it
for unless You spread Your clemency upon us
no one will be able to see life.
O God, I beseech Your clemency,
do not set me among the goats on Your left[180],
those who angered You,
and do not say "I do not know you,"[181]
but in Your clemency give me
incessant tears and repentance;
humble my heart and cleanse it
that it may become a temple of Your grace.
Although I am a sinner and impious,
nevertheless I constantly knock at Your gates;
although I am slow and idle
nevertheless I wish to walk on Your paths.[182]
My Lord and Savior why do You forsake me?
Have mercy on me because You alone are without sin;
remove me from the mire of my iniquity
lest I sink in forever.
Deliver me from the mouth of my enemy,
for he roars like a lion wishing to devour me;[183]
rouse up Your might that it may come and give me life;[184]
flash forth Your lightnings[185] and destroy his power;

---

[180] Cf. Matthew 25:33.
[181] Matthew 25:12.
[182] Cf. Micah 4:2.
[183] Cf. 1 Peter 5:8.
[184] Cf. Psalm 80:2.
[185] Cf. Psalm 18:14.

երկիցէ եւ զարհուրեցի յերեսաց քոց,
քանզի տկար է եւ ոչ ունի զօրութիւն կալ առաջի քո:
Եւ արժանաւորեա՛ զիս ընդ փրկեալսն խաչիւ եւ արեամբ քով՝
գոհանալ եւ փառաւորել զքեզ
ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյն,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

may he be frightened and terrified before Your face,
because he is powerless and has no strength to stand before You.
Make me worthy that with those saved by Your cross and blood
I may give thanks and praise to You
along with the Father and the Holy Spirit
now and always and unto the ages of ages. Amen.

Դ

Նորին դարձեալ աղօթք դղջման:

Տէր Աստուած զօրութեանց՝ աղաչեմ զքեզ,
որ մեծդ ես եւ ահաւոր,
ահեղ եւ սքանչելի,
անեղ եւ անանցանելի,
անբաւ եւ անբովանդակելի
եւ ամենեւին անքննելի եւ անիմանալի եւ անհաս,
ի վեր քան զամենայն
եւ յամենեցունց օրհնեալ գովեալ եւ փառաւորեալ,
անյիշաչար գթած եւ մարդասէր:
Քանզի դու միայն ես հայր ամենակալ
եւ արարիչ ամենայն լինելութեանց,
զորս ի չգոյէ գոյացուցեր,
եւ ունիս ի հաստատութեան.
եւ դու Տէր՝ որ Տէր ես ամենայնի,
եւ ամենայն արարածք քոյով հրամանաւդ կառավարին:
Դու ես ամենեցուն օգնական եւ պահապան.
դու բժշկես զվիրաւորեալսն ի բանսարկուէն,
եւ առողջացուցանես զհիւանդացեալս մեզօք.
ընդունիս զխոստովանողսն եւ զապաչխարողս,
եւ քաւես եւ սրբես զյանցանսն մեղուցելոց:
Վասն որոյ ես որ կարի լի եմ մեղօք,
առ քեզ անկանիմ յարաժամ.
աղաչեմ եւ մաղթեմ եւ խնդրեմ ի քէն զթողութիւն.
դու նայեա՛ յիս Փրկիչ՝ մարդասիրութեամբ քով,
եւ ընկալ զթութեամբ քով զգերեալս ի չար թշնամւոյն:
Խոնարհեա՛ Տէր՝ ի մաղթանս իմ,
եւ բժշկեա՛ զհոգւոյ իմոյ զխոցոտումն յաններեւոյթ նետից սատանայի:
Տե՛ս Տէր՝ զտառապանս քոյ ծառայիս,
եւ չնորհեա՛ զթողութիւն անթիւ յանցանաց իմոց զոր մեղայ:
Լո՛ր Տէր՝ ձայնի ողբալոյս եւ ցաւագին պաղատանացս,
զի կարօտ եմ չնորհի քոյ եւ ողորմութեանդ:
Թո՛ղ Տէր՝ զյանցանս իմ բազմամեաց եւ զմեղս իմ զանհամարս
մինչչեւ հասեալ իցէ օր դատաստանի քոյ.
փարատեա՛ յինէն զանզղջութեան խաւարն՝
որ տարածեալ կայ ի սրտիս եւ զեղջ հաստատեա՛.
յորդորեա՛ զիս յարտասուս
եւ ի զեղջ ապաչխարութեան հանապազ:

PART IV:

MORE PRAYERS FROM [EPHREM] ON REPENTANCE

O Lord, God of might, I beseech You,
You who are great and awesome,
terrible and marvelous,
uncreated and eternal,
infinite and unfathomable,
altogether unsearchable, incomprehensible and inconceivable,
above all and in all
blessed, praiseworthy and glorious,
forgiving, merciful, and Lover of mankind.
Because You alone are Father, all-powerful,
and creator of all that has come to be,
which You brought into being from non-being,
and which You hold in constancy.
Indeed You are the Lord, who are Lord of everything,
and all creatures are governed by Your command.
You are the helper and the keeper of everyone,
You heal those who have been wounded by the adversary,
You restore those who have fallen sick in their sins,
You receive those who make confession and repent,
and You pardon and cleanse the transgressions of sinners.
Therefore, I who am exceedingly filled with sin,
prostrate myself before You continuously,
I beseech, entreat and beg from You forgiveness.
Look upon me, O Savior, in Your love for mankind,
and in Your clemency, receive me who am captive to the evil enemy.
Incline, O Lord, to my entreaties
and heal my soul wounded by the invisible arrows of Satan.
Behold, O Lord, the tribulations of Your servant,
grant forgiveness for the innumerable transgressions that I
have committed.
Hear, O Lord, the voice of my laments and of my mournful supplications,
for I am in need of Your grace and Your mercy.
Forgive, O Lord, my many transgressions and my innumerable sins
even unto the day Your judgement arrives.
Remove from me the darkness of my lack of contrition
which is widespread in my heart, and set [in its place] compunction.
Urge me on to tears
and to continual compunction and repentance.

Շնորհեա՛ ինձ Փրկիչ՝ դղջումն արտասուաց մարգարէին,
որով զմահիճս թանայր,
զի եւ ես զվէր հոգւոյս իմոյ լուացից
հեծեծանօք եւ պաղատանօք եւ ողբագին արտասուօք:
Գիտեմ Տէր՝ զի յանցանք իմ անթիւ են առաջի քո՝
մարդասէր,
այլ եւ անբաւ են ողորմութիւնք քո ի վերայ ապաչխարողաց.
ընդ որս եւ ինձ ողորմեա՛,
ինձ որ առաւելս եմ անօրինեալ քան զամենայն մարդ:
Եւ չեմ արժանի առ քեզ ի վեր հայել բարերար՝
ի բազմութենէ պատահեալ յանցանացն զոր գործեցի.
Այլ դու Տէր՝ հայեաց ի վարանումն տարակուսանաց իմոց
յերկիւղէ գեհենին,
եւ մի՛ անզեղջ եւ անապաչաւ հաներ զիս յաչխարհէս լի յանցանօք.
այլ ի վայրս տարժանելի վաստակոց
եւ ի ջան կատարեալ ապաչխարութեան
առ զհոգի իմ յինէն,
եւ խառնեա՛ ի թիւ ճչմարիտ ապաչխարողացն արդարացելոցն՝
որ ի փառս քո վայելեն:
Ոչ վասն իմ ինչ վարուց եմ արժանի ողորմութեան քոյ՝ մարդասէր,
այլ վասն գթութեան քոյ Տէր չնորհեա՛ ինձ թողութիւն յանցանաց իմոց,
եւ օգնեա՛ ի մարտի թշնամւոյն ծուլացելոյ ծառայիս քոյ՝ բարերա՛ր.
քանզի բազում անգամ խոստացայ զյանցանս իմ
խոստովանել եւ ապաչխարել,
եւ անօրէն թշնամին ժամէ ի ժամ ձգելով կորոյս
զկարողութեան ժամանակն ապաչխարելոյ:
Եւ արդ եթէ ոչ դու Տէր՝ օգնեսցես եւ չնորհիս քո զօրացուսցես,
չիք ինձ ի գործոց իմոց փրկութիւն.
զի թէպէտ եւ բանամ զբերան իմ յաղօթել,
եւ զձեռս իմ առ քեզ ի վեր համբառնամ յաղաչանս,
անդրէն զսիրտ իմ սատանայ պատրուակէ,
եւ զմիտս մերժէ յաստուածային յերկիւղէ,
զանազան եւ զաղիր խորհրդովք զբաղեցուցանէ
եւ ընդունայն հանէ յաղօթիցն:
Վասն որոյ զՓրկիչդ իմ աղաչեմ,

Grant to me, O Savior, the tearful compunction of the prophet
with which he used to soak his bed,[186]
that I too may bathe the wound of my spirit
with groanings, supplications and tears of lamentation.
I know, O Lord, that my transgressions are innumerable before You,
O Lover of mankind,
but Your mercy toward penitents is infinite.
Have mercy upon them and upon me,
me who am far more impious than any man.
I am not worthy to look up to You, O Beneficent One,
because of the multitude of transgressions that I have committed.
But You, O Lord, look upon my great agitation
due to my fear of Gehenna;
do not take me from the world impenitent, obdurate, and full of transgressions.
But in place of [my] unworthy deeds
and for the care of perfect repentance
take my spirit from me
and join [it] to the number of true and justified penitents
who revel in Your glory.
Not for any part of my life am I worthy of Your mercy, O Lover of mankind,
but because of Your clemency, O Lord, grant to me forgiveness of my transgressions;
give aid to Your idle servant in the battle against the enemy, O Beneficent One,
for many times have I promised
to confess and repent of my transgressions,
but the wicked enemy continuously casts [his arrows]
and undoes the time and the capacity for repentance.
And now if You, O Lord, do not help and strengthen me with Your grace,
there is no salvation for me from my works,
for even though I open my mouth to pray
and lift my hands up to You in supplication,[187]
then Satan veils my heart
and drives my mind away from divine fear,
with various obscene thoughts he distracts it
and draws it away from prayer.
For this reason I beseech You, My Savior,

[186] Cf. Psalm 6:6.

[187] Cf. Psalm 63:4.

փրկեա՛ զիս ի պատերազմէս յայսմանէ.
քանզի կարի նեղեալ եմ ի նենգութենէ թշնամւոյն՝
որ երբեմն ի հաւատս յորդորէ յօժարամիտ սրտիւ խնդութեամբ,
եւ երբեմն ի մեղս ընկենու ոչ յիչելով զրոց գեհենոյն՝
զոր ոչ զգացի,
եւ ոչ լալով լուացի զվիրաց յանցանաց իմոց փտութիւնս:
Որ չարախոցս եմ վիրաւորեալ յանթիւ մեղացս բազմութենէ,
եւ ոչ բաւեմ ապրել ծուլացելով անձամբս.
այլ յողորմութիւն քո յուսալով համարձակիմ առ քեզ աղօթել
բարերարիդ եւ մարդասիրիդ Աստուծոյ:
Ընկա՛լ զաղաչանս իմ ցաւագինս եւ զպաղատանս իմ աղերսաբերս,
եւ չնորհեա՛ ինձ զղջումն արտասուաց ապաչխարութեան,
որով զմեղս իմ քաւեցից,
եւ զարարիչդ իմ հաչտեցուցից մաղթանօք:
Ահա Տէ՛ր՝ սիրտ իմ գելու յանթիւ մեղացս վարանաց,
եւ որովայն իմ հեծէ առ քեզ ողբալով.
եւ անձն իմ հեծէ եւ աչք իմ բաղձայ արտասուաց
յիչելով զմեղաց իմոց զրազմութիւն:
Զի լի եմ անթիւ յանցանօք
եւ անհամար գործովք անօրէնութեամբ,
եւ առ քաւիչդ իմ խոստովանիմ ողբալով.
քանզի Աստուած ես գթութենանց եւ Տէր ողորմութեանց,
գթա՛ յամենամեղս որ ի քեզ եմ ապաւինեալ, բազմագութ:
Զի կարեվէր եմ մեղօք,
եւ տագնապիմ ախտիւ յանցանօք,
եւ խնդրեմ ի քէն բժշկիլ՝ որ բժիչկ ես հոգւոց եւ քաւիչ յանցանաց:
Եւ արդ բժշկեա՛ Տէր,
զի լեզու իմ վիրաւորի դատարկաբանութեամբ
եւ ի զրախօս բամբասանաց:
Լուսաւորեա՛ Տէր՝ զաչս իմ
յածողս ի չարաչար նայելոյ եւ յանդէպ տեսանելոյ:
Սրբեա՛ Տէր՝ զմիտս իմ
ի խաւարային խորհրդոց սատանայի
եւ յամենայն չար գործոց թշնամւոյն,
եւ լցո՛ չնորհօք եւ ողորմութեամբ քո:

save me from this battle
because I am in great straits from the guile of the enemy
who sometimes exhorts to faith with eager and joyful heart
and sometimes casts into sin by not remembering the pit of Gehenna.
I did not learn this
nor did I by weeping wash the putrid sores of my transgressions.
For I am wounded and injured by the numberless multitude of my sins,
and I am unable to live, my soul being so idle.
But hoping in Your mercy I dare to pray to You,
O beneficent God and Lover of mankind.
Receive my dismal supplications, petitions and entreaties,
and grant me contrition with tears of repentance
by which I might win pardon for my sins,
and that I might pacify my Creator by my entreaties.
Behold, O Lord, my heart is distressed by the embarrassment of my innumerable sins,
my innards groan as they make lamentation to You,
and my soul groans and my eyes become soft with tears
as I call to mind the multitude of my sins.
For I am filled with innumerable transgressions
and with uncountable deeds of impiety,
and to You who pardon me, I confess with lamentation
because You are a God of clemency and a Lord of Mercy.
Have clemency on all my sins for in You I take refuge, You who are most clement.
Because I am mortally wounded by my sins
and am tormented with disease from [my] transgressions,
I seek to be healed by You who heal souls and who pardon transgressions.
So now heal [me], O Lord,
for my tongue is wounded by idle discourse
and by the useless utterances of slander.
Enlighten, O Lord, my eyes
that roam and gaze on wicked things and look upon indecent sights.
Purify, O Lord, my mind
from the dark thoughts of Satan
and from every evil deed of the enemy,
and fill it with Your grace and with Your mercy.

Լուա՛ Տէր՝ զախտ հոգւոյ իմոյ
զոր ժանդահոտ մեղաց նեխութեամբ զաղրացուցի,
եւ չնորհեա՛ ինձ խորհիլ միչտ զսիրոյդ քո՝
բաղձալ յարաժամ:
Հօրդ մարդասիրի եւ բարերարի
կարօտիմ հանապազ,
ընկա՛լ զիս գթութեամբ որպէս զորդին անառակ.
լցո՛ զքաղց իմ եւ զծարաւ յառատաբաչխս չնորհէդ՝
բարերա՛ր:
Եւ խնդրեմ առ քեզ մերձենալ,
եւ միչտ չնորհաց քոց փափագիմ յարաժամ,
եւ զողորմութիւնս քո բերկրանօք ժտեմ հայցել մաղթանօք:
Եւ դու Տէր՝ ընկա՛լ զվչտագնելոյս տառապանս,
եւ ներեա՛ քոյով մեծաւ ներողութեամբ յանցաւոր ծառայիս՝
բարերա՛ր:
Զի թէ առանց ներելոյ զյանցանս իմ դատես,
ապա երանեմ չելելոցն յորովայնէ,
զի հուր գեհենին է ժառանգութիւն հանապազ.
քանզի ոչ մնացին ճանապարհք մեղաց՝ ընդ որս ոչ գնացի,
եւ ի չնորհաց Սուրբ Հոգւոյդ մերկացայ:
Արդ անկեալ առ քեզ պաղատիմ,
գթա՛ ի ժտութիւն թախանձանաց մաղթողիս,
եւ մի՛ մերժեր զիս յողորմութենէ քումմէ՝ ողորմած Տէր:
Զի զքեզ խնդրեցի եւ զքեզ աղաչեմ,
լո՛ց զփափագ իմ որում միչտ հոգի իմ կարօտի՝
մեղաց թողութեան:
Զի ոչ թէ իբրեւ զրարեգործ ոք հայցեմ ի քէն համարձակ,
այլ իբրեւ զմեծամեղ յանցաւոր ոք՝
աղերսիւ ժտեմ յարաժամ:
Ոչ զոգի իմ մաքուր ունելով ինչ մերձենամ առ քեզ՝ մարդասէր,
այլ ի մաքրութենէդ քումմէ զժահահոտութիւն վիրաց մեղաց իմոց
մաքրել աղաչեմ.
զի դու միայն ես հայր իմ եւ Տէր բարերար,
արարիչ իմ եւ փրկիչ իմ եւ կեցուցիչ իմ:
Առ ո՞ երթայց՝ մարդասէր,
կամ յումմէ՞ խնդրեցից օգնութիւն եւ վիրաց իմոց բժշկութիւն.
այլ քեզ մաղթեմ ողորմածիդ Աստուծոյ
եւ բազմագութ իմոյ արարչիդ:

Cleanse, O Lord, the stain of my spirit
which the stench of [my] sins has disfigured and corrupted,
and grant that I may always meditate upon Your love
and continually desire it.
From You, O Father, Lover of mankind and Beneficent One,
I am in constant need;
receive me with clemency as [You did] the prodigal son;[188]
fill my hunger and my thirst with Your bountiful grace,
O Beneficent One.
And I seek to draw near to You
and I am always desirous of Your grace
and I continuously and joyfully persist in imploring [You] with [my] petitions.
And You, O Lord, receive the entreaties of me who am deeply afflicted,
and grant pardon in Your great favor to your transgressing servant,
O Beneficent One.
For if You were to judge my transgressions without granting any pardon
then I would be happy for those who had never come forth from the womb
for the fire of Gehenna is their common inheritance.
Because the paths of sin did not remain, I did not walk on them,
and I have been stripped of the graces of Your Holy Spirit.
So I fall down before You and beg of You,
be compassionate to the earnest entreaties of me who am making supplication
and do not exclude me from Your mercy, O merciful Lord.
For You have I sought and to You I pray,
fulfill my desire for that which my spirit is ever in need,
the forgiveness of sins.
For not like someone who does good deeds do I boldly make request of You,
but like a great sinner and transgressor
I continually entreat You with supplication.
Although I did not keep my soul clean I draw near to You, O Lover of mankind,
and I pray to You to purify the stench from the wounds of my sins
with Your own purity,
for You alone are my father and beneficent Lord,
my creator, my savior, and my life-giver.
To whom shall I go, O Lover of mankind?
Or from whom shall I seek help and healing for my wounds?
But I make supplication to You, O most-merciful God
and my most compassionate Maker?

[188] Cf. Luke 15:20.

Մի՛ բարկութեամբ խրատեր
եւ մի՛ սրտմտութեամբ քո յանդիմաններ՝ բարերար.
մի՛ ընդ պատժեալսն պատժեր դիս,
եւ մի՛ ընդ դատապարտեալսն դատապարտեր դիս՝ գթած.
մի՛ անողորմ պահանջանօք պահանջեր,
եւ մի՛ սոսկալի գեհենիւդ դողացուցաներ՝ մարդասէր:
Մի՛ յաւիտենական ամօթովն ամաչեցուցաներ դիս,
եւ մի՛ ի մեծի աւուրն սրբոցն պսակելոյ՝
դիս պատուհասեր անողորմ եւ աննեղելի:
Այլ ապրեցո՛ դիս Տէր՝ ի հրահոսան հալոցացն
եւ ի հրաբորբոք գեհենոյն,
յանկոյծ կապանացն
եւ յաննչոյլ խաւարէն,
յանաչառ դատաստանացն
եւ յաննեղելի տանջանացն ցաւոց:
Այո՛ Տէր՝ յայտնեա՛ առ իս զգթութիւնս քո,
զի սովոր ես ցուցանել զողորմութիւն քո առ կարօտեալս,
նեղեալս եւ վչտագնեալս մեղօք.
եւ այժմ առ իս ցոյց զբարերարութիւնդ քո,
որ չարաչարս եմ վիրաւորեալ առաւել քան զՍողոմայն.
եւ միշտ երկիւղիւ դողամ հանապազ՝
եթէ կենդանւոյն հրակիզեսցես
իբրեւ զնոսա հրատեղացն բարկութեամբ:
Վասն որոյ աղաչեմ զգթութիւնս քո՝ մարդասէր,
չնորհեա՛ ինձ նման նինուէացւոցն՝
զսրտմտութիւն քո յողորմութիւն դարձուցանել,
եւ կանգնիլ ի յանցանաց կործանմանէ.
զի ահա ծով մեղաց յանդունդս ընկղմէ զիս
վասն անօրէնութեան իմոյ առաւել քան զջրհեղեղն:
Այլ հրամայեա՛ ինձ Տէր՝
զողորմութիւնս քո տապան ամրութեան իբրեւ զՆոյի
ապրիլ ապաչխարութեամբ ի հրեղէն ծովէն անդնդոց:

Do not admonish [me] in Your anger
and do not reproach me in Your wrath, O Beneficent One;
do not punish me with those who are being punished,
and do not condemn me with those who are being condemned, O Compassionate One.
Do not examine me with a merciless examination,
and do not give me over to trembling in Your hideous Gehenna, O Lover of mankind.
Do not put me to shame in eternal disgrace
and, on that great day of the crowning of the saints,
do not punish me without mercy and without forgiveness.
Rather, deliver me, O Lord, from the torrid flames of that furnace
and from the blazing fires of Gehenna,
from those unbreakable bonds,
from that lightless darkness,
from impartial judgment
and from those intolerable pains of torture.
Yes, Lord, reveal to me Your compassion
for You are wont to show Your mercy to those in need,
to those afflicted and tormented by their sins.
And now show Your beneficence to me
who am wounded far worse than Sodom.[189]
I continually quake in constant fear
that You will burn me up alive
just like those who were burnt up in Your anger.
For this reason, I appeal to Your compassion, O Lover of mankind,
give me the same grace as [You did] the Ninevites,[190]
by turning Your indignation into mercy
and raising me up from the destruction of transgressions,
for behold a sea of sins is drowning my haughty self
because of my iniquities even more than that flood.[191]
But command for me, O Lord,
that Your mercy be an ark of durability, just as it was for Noah,[192]
to deliver me by repentance from this unending sea of fire.

[189] Cf. Genesis 19:24–28.
[190] Cf. Jonah 3:10.
[191] Cf. Genesis 7:21–23.
[192] Cf. Genesis 7:17–24; cf. also 1 Peter 3:20, 2 Peter 2:5.

Քանզի դու այն բարերար Տէրն ես,
որ վասն մարդասիրութեան քոյ
ի ծառայական կերպ իջեր՝
թագաւորդ, ազատեա՛ եւ դիս ի չար ծառայութենէ
մեղաց իմոց եւ յանօրէնութեանց:
Որ վասն իմ թուք ի դէմս
եւ ապտակ ի ծնօտս եւ փուչ ի գլուխս ընկալար՝ մարդասէր,
հան զփուչ յանցանաց իմոց՝
որ չարաչար վիրաւորիմ հանապազ:
Որ վասն իմ փայտի խաչի եւ խոցման գեղարդեանն
եւ ձեռաց կապանաց եւ բեւեռացն համբերեցեր՝ բարերար,
լո՛յծ եւ դիս ի դառն կապանաց սատանայի,
եւ բժշկեա՛ զխոցումն աններեւոյթ գեղարդեան թշնամւոյն:
Եւ արդ՝ որ այսմ ամենայնի համբերեցեր ողորմած Տէր՝ վասն իմ,
եւ այժմ աղաչեմ վասն մեղացս թողութիւն:
Թէպէտ վասն անբաւ ծուլութեանս իմոյ
չեմ արժանի ողորմութեան քոյ,
սակայն վասն ժառանգութեան իմոյ լո՛ր Տէր՝
իբրեւ այրւոյն թախանձանաց առ անիրաւ դատաւորին:
Եւ առ իս կատարեա՛ զբան քո Տէր իմ՝
թէ ոչ ևկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս:
Եւ գիտեմ՝ եթէ արդարքն իբրեւ դպարտս ընդունին
ի քէն զարդարութեան պարգեւսն.
բայց ինձ ողորմութիւն չնորհեա՛ իբրեւ մեծամեղի
եւ բիւրապատիկ մահապարտի:
Որ առ ամենեսեան ես գթած,
լո՛ր եւ իմ ողբալոյս առ քեզ՝ բարերար,
եւ ունկն դիր գթութեամբ պաղատանաց ձայնիս՝
ողորմած.
դարձո՛ զիս յուղիղ ճանապարհն իբրեւ զհայհոյիչն եւ զհալածիչն,
եւ արդարացո՛ որպէս զմաքսաւորն.
ողորմեա՛ ինձ որպէս Քանանացւոյն.
ընկալ զիս որպէս զանառակ որդին,
եւ միւսանգամ դարձո՛ յիս զչնորհն աւազանին սրբութեան

Because You are that beneficent Lord
who, in Your love for mankind,
descended into that form of a servant,[193]
O King, now save even me from the wicked servitude
to my sins and to my iniquities.
You who, on my behalf, received spit on Your face,
a slap on Your cheek and thorns on Your head,[194]
O Lover of mankind, remove the thorn of my transgressions
with which I am constantly and cruelly wounded.
You who, on my behalf, endured the wood of the cross, the piercing by the lance
and the bonds and the nails in the hands,[195] O Beneficent One,
